# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2024-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ՈՐՈՇՈՒՄ**

...... 2024 թվականի N -Լ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2024-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և  14-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1.Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2024-2028 թվականների ռազմավարությունը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2024-2028 թվականների միջոցառումների ծրագիրը՝ համաձայն N 2 հավելվածի:

2.Միջոցառումների ծրագրում ներառված միջոցառումների պատասխանատու կատարող հանդիսացող՝ պետական կառավարման համակարգի մարմինների և տարածքային կառավարման մարմինների ղեկավարներին՝ մինչև յուրաքանչյուր տարվան հաջորդող փետրվարի 15-ը, յուրաքանչյուրն իր մասով, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ներկայացնել տեղեկատվություն միջոցառումների ծրագրում

ներառված միջոցառումների իրականացման ընթացքի մասին:

3.Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝ մինչև յուրաքանչյուր տարվան հաջորդող մարտի 15-ը՝ միջոցառումների ծրագրում ներառված միջոցառումների նախորդ տարում ստացված և տվյալ տարվա համար ծրագրված արդյունքների վերաբերյալ ամփոփ հաշվետվությունը տեղադրել նախարարության պաշտոնական կայքէջում:

Հավելված N 1
ՀՀ կառավարության
2024 թվականի N -Լ որոշման

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2024-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ**

**1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ**

1. Հայաստանի Հանրապետությունում գենդերային հավասարության ապահովման քաղաքականության իրականացման 2024-2028 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը (այսուհետ՝ ռազմավարություն) մշակվել է ի կատարումն 2021 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության N 1902-Լ որոշման N 1 հավելվածի 14.1 -ին կետի:
2. Սույն ռազմավարության մշակումը պայմանավորված է նաև Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարության և վերջինիս միջոցառումների ծրագրերի ավարտի շրջափուլով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրած և վավերացրած միջազգային կոնվենցիաների և հռչակագրերի դրույթներով:
3. Ռազմավարությունը սահմանում է գենդերային քաղաքականության առաջնահերթ ուղղությունները և ուղղված է հասարակական կյանքի բոլոր ոլորտներում կանանց և տղամարդկանց իրավունքների և հնարավորությունների իրացման համար նպաստավոր պայմանների ստեղծմանը:
4. Հայաստանը 1993 թվականին ստորագրել է Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան (CEDAW), որը գենդերային խտրականության հաղթահարման և գենդերային հավասարության հաստատմանն առնչվող միջազգային ամենաընդգրկուն փաստաթղթերից մեկն է: Փաստաթուղթը պարտավորեցնում է մասնակից պետություններին միջոցներ ձեռնարկել կանանց նկատմամբ խտրականությունը վերացնելու և գենդերային հավասարության հասնելու համար:

5. Հայաստանը ստորագրել է նաև մեկ այլ ռազմավարական փաստաթուղթ՝ Պեկինի հռչակագիրը և Գործողությունների ծրագիրը, որն ընդունվել է 1995 թվականին Կանանց նվիրված չորրորդ համաշխարհային խորհրդաժողովում: Խորհրդաժողովի մասնակից պետությունները պարտավորություններ են ստանձնել մշակել և իրականացնել գենդերային հավասարության ազգային ռազմավարություններ և քաղաքականություններ:
6. Հայաստանը, ՄԱԿ-ի մյուս անդամ երկրների հետ մասին, նաև պարտավորվել է հասնել ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներին (ԿԶՆ), որոնցից 5-րդ Նպատակն ամբողջությամբ ուղղված է գենդերային հավասարության ապահովմանն ու բոլոր կանանց և աղջիկների հզորացմանը: Այն նույնպես հորդորում է կիրառել գենդերային հավասարության ապահովման գործուն և կայուն կառուցակարգեր և քաղաքականություններ:
7. 2018 թվականին Հայաստանը ստորագրել է նաև Եվրոպայի խորհրդի Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին կոնվենցիան: Կոնվենցիան նույնպես ընդգծում է գենդերային բռնության դեմ համապարփակ, համալիր և համակարգված արձագանքման, լուծումների, կառուցակարգերի և քաղաքականության մշակման անհրաժեշտությունը:
8. Հայաստանի Հանրապետության կառավարությունը վերջին տարիներին պետական մարմինների գործունեության շրջանակում համագործակցելով միջազգային և հասարակական կազմակերպությունների հետ հասարակական կյանքի տարբեր ոլորտներում իրականացրել է գենդերային հավասարության ապահովմանն ուղղված միջոցառումներ, որի արդյունքում որոշակիորեն բարելավվել են կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման համար անհրաժեշտ նախապայմաններն ու միջավայրը:
9. Ըստ 2023 թվականի Գենդերային խզման գլոբալ զեկույցի՝ 146 երկրների ցանկում Հայաստանն այս տարի զբաղեցնում է 61-րդ տեղը, որը Հայաստանի համար առաջընթաց է ինչպես նախորդ տարիների համեմատ, այնպես էլ տարածաշրջանի և հարևան մյուս երկրների համեմատ, այդ թվում՝ Վրաստանի (76-րդ տեղը), Ադրբեջանի (97-րդ տեղը), Թուրքայի (129-րդ տեղը) և Իրանի (143-տեղը):
10. Այդուհանդերձ, հարկ է նշել, որ լիարժեք գենդերային հավասարության հասնելու ճանապարհին ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում դեռ առկա են բազմաթիվ և տարաբնույթ խոչընդոտներ և մարտահրավերներ, որոնց հաղթահարումը պահանջում է համալիր և ռազմավարական մոտեցումներ:
11. Գենդերային հավասարության ապահովման պետական ռազմավարության հերթական շրջափուլի (2024-2028 թվականների) մշակման Հայաստանի Հանրապետության կառավարության նախաձեռնությունը հաստատում է քաղաքական կամքն ու պատրաստակամությունը՝ խնդիրը պետության հովանու ներքո վերցնելու, այն է՝ ռազմավարական գերակայություններ և քաղաքական լուծումներ առաջարկելու և դրանք հետևողականորեն իրականացնելու հարցում:
12. Լեռնային Ղարաբաղի դեմ Ադրբեջանի կողմից 2023 թվականի

սեպտեմբերին սանձազերծած նոր ոտնձգությունները և ռազմական գործողությունները հանգեցրեցին Լեռնային Ղարաբաղի հայերի բռնի տեղահանմանը: Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված կանանց և աղջիկների, ինչպես նաև տղամարդկանց և տղաների կարիքների գնահատումն օրակարգային խնդիր է: Այդ կարիքների գնահատման արդյունքում հնարավոր կլինի քարտեզագրել նրանց խնդիրները և վերջիններիս տալ համապարփակ և համալիր լուծումներ: Նրանց խորքային կարիքների գնահատումից հետո այդ խնդիրներն ու դրանց լուծումները կմշակվեն և կներառվեն սույն ռազմավարության միջոցառումների պլանի համատեքստում:

## 2. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

13. Սույն ռազմավարության նախագիծը մշակվել է մասնակցային և փաստահեն սկզբունքների համաձայն՝ ապահովելով տարբեր շահակիցների ներգրավվումը՝ առաջնային տվյալների հավաքագրման նպատակով, անցկացնելով ոլորտային և միջոլորտային տարբեր խմբերի հետ հանդիպումներ, ֆոկուս խմբային քննարկումներ և փորձագիտական հարցազրույցներ: Սա հնարավորություն է տվել ապահովելու ընդգրկուն և մասնակցային քաղաքականություն:
14. Ֆոկուս խմբային քննարկումներին և հարցազրույցներին, մասնավորապես, մասնակցել են պետական և ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության և միջազգային կառույցների ներկայացուցիչներ, ոլորտի փորձագետներ և այլ շահակից խմբեր:
15. Բացի վերոնշյալ մեթոդների կիրառմամբ առաջնային տվյալների հավաքագրումից, ռազմավարության նախագծի մշակման համար հիմք են հանդիսացել նաև Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, պետական այլ գերատեսչությունների և կառույցների, միջազգային և տեղական գործընկերների կողմից իրականացված տարբեր հետազոտությունները, զեկույցներն ու վերլուծությունները, մի շարք գերատեսչությունների կատարողականներն ու հաշվետվությունները, որոնք ուղղված են եղել Հայաստանի Հանրապետությունում գենդերային խնդիրների վերլուծությանը, մշտադիտարկմանն ու գնահատմանը:
16. Կանանց նկատմամբ խտրականության վերացման հարցերով կոմիտեի 2022 թվականի հոկտեմբերի 12-ին և 13-ին տեղի ունեցած 1913-րդ և 1915-րդ նիստերի ընթացքում (CEDAW/C/SR.1913 և CEDAW/C/SR.1915) քննարկվել է Հայաստանի յոթերորդ պարբերական զեկույցը (CEDAW/C/ARM/7): Կոմիտեն բարձր է գնահատել Հայաստանի կողմից տարբեր ոլորտներում գրանցած առաջընթացն ու հաջողությունները՝ միևնույն ժամանակ Հայաստանին ներկայացնելով մի շարք հանձնարարականներ, որոնք ներառվել են սույն ռազմավարության մեջ, ինչպես նաև վերջինիս միջոցառումների պլանում:
17. Նախագծի մշակման համար կարևոր է եղել նաև Հայաստանի Հանրապետության 2019-2023 թվականների գենդերային պետական ռազմավարության շրջանակում իրականացված աշխատանքների և միջոցառումների գնահատումը՝ կատարված ՄԱԿ-Կանայք

կազմակերպության կողմից, որը ցույց է տվել, որ ռազմավարության միջոցառումների ծախսերի և բյուջետավորման գործընթացը բացակայում էր, ինչը հանգեցրել է ռազմավարության իրականացման ընթացքում գենդերային հավասարության խնդրի լուծման համար պատասխանատու կենտրոնական կառավարման:[1] Այս առումով կարևոր է դառնում նոր ռազմավարության միջոցառումների պլանում կատարել համապատասխան միջոցառումների ծախսերի հաշվարկում և բյուջետավորում:

18. 2024-2028 թվականների ռազմավարության նախագծի շրջանակներում կարևորվել են նախկին ռազմավարության մեջ տեղ գտած հինգ գերակա ուղղությունները (այսուհետ՝ գերակայություններ): Դրանցից չորսը պահպանվել են սույն ռազմավարության մեջ որպես գերակայություններ, իսկ մեկը՝ ներկառուցվել մնացած բոլոր գերակայություններում: Դրանց ավելացել է ևս երկու ուղղություն՝ ըստ առկա իրավիճակի, ոլորտային խնդիրների առաջնայնության և անհրաժեշտության՝ հաշվի առնելով նաև միջազգային հանձնարարականները:
19. Այսպիսով, 2024-2028 թվականների ռազմավարությունը սահմանում է գենդերային քաղաքականության վեց գերակայություն՝ կառավարման և որոշումների ընդունման մակարդակների, սոցիալ-տնտեսության և աշխատանքային, կրթության և գիտության, առողջապահության, գենդերային բռնության, կանանց/ աղջիկների նկատմամբ և ընտանեկան բռնության կանխարգելման և կլիմայի ոլորտներում:
20. Այդ գերակայություններն ուղղված են նշված ոլորտներում կանանց և տղամարդկանց իրավունքների կիրարկման ու հնարավորությունների իրացման համար բարենպաստ և դրական միջավայրի ստեղծմանը՝ առաջնորդվելով նաև Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորություններով:
21. Համապատասխանաբար յուրաքանչյուր գերակայության համար առանձնացվել են ոլորտային խնդիրների լուծմանն ուղղված նպատակները և ակնկալվող արդյունքները: Ակնկալվող արդյունքներն ավելի առարկայական ներկայացվել են ռազմավարության միջոցառումների ծրագրում:
22. Ելակետային իրավիճակը նկարագրվում է ռազմավարության բուն տեքստում՝ յուրաքանչյուր գերակայության վերաբերյալ առանձին: Յուրաքանչյուր գերակայություն, բացի տվյալ ոլորտի իրավիճակի համառոտ վերլուծություն-նկարագիրը տրամադրելուց, ներկայացնում է նաև գերակայության նպատակներն ու ակնկալվող արդյունքները:
23. Միջոցառումների ծրագրով սահմանվում են գերակա ուղղություններից և նպատակներից բխող գործողությունները՝ դրանց կատարման համար պատասխանատու մարմնի, կատարման վերջնաժամկետի, ակնկալվող արդյունքների, արդյունքային ցուցանիշների և յուրաքանչյուր գործողության համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ակնկալվող աղբյուրի նախատեսմամբ:

24. Միջոցառումների արդյունավետ իրականացման տեսանկյունից կարորվում է Հայաստանի Հանրապետությունում գործընկերների, այդ թվում՝ տեղական, միջազգային ու տարածաշրջանային կազմակերպությունների կողմից տրամադրվող ֆինանսական, տեխնիկական և փորձագիտական աջակցությունը:

25. Ռազմավարության միջոցառումների ծրագրի արդյունավետ իրականացումը կնպաստի ներառական ժողովրդավարության ամրապնդմանը, ինչպես նաև Հայաստանում ավելի ապահով, պաշտպանված և զարգացած միջավայր ապահովելուն՝ բոլոր քաղաքացիների և Հայաստանում բնակվող յուրաքանչյուր անհատի համար։

### 3. **ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

### **ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳԻՐ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ, ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ**

26. Ռազմավարության գերակայությունների նպատակները և խնդիրները սահմանվել են փաստահեն տեղեկության և տվյալների առաջնային և երկրորդային վերլուծության արդյունքում, յուրաքանչյուր ոլորտում ակնկալվող փոփոխության տեսության ներկառուցմամբ՝ այդ փոփոխություններին հասնելու համար թիրախային միջոցառումներ պլանավորելով և արդյունքների գնահատման ցուցանիշներ սահմանելով։
27. Ռազմավարությունն առաջնորդվում է համալիր մոտեցմամբ՝ բացառելու կանանց և աղջիկների կրկնակի խոցելիությունը, ինչպես նաև հաշմանդամությունունեցող անձանց՝ մարդու իրավունքների սկզբունքներով և այդ իրավունքները կիրարկելու համար անհրաժեշտ պայմանների ստեղծման անհրաժեշտությամբ, այսպիսով բոլոր գերակայություններում բոլոր անհրաժեշտ հատվածներում համապատասխան դիտարկումներ կատարելով։
28. Համաձայն 2021 թվականի Գենդերային խզման գլոբալ զեկույցի՝ տարածաշրջանում Հայաստանի գենդերային խզման ցուցանիշն ամենաբարձրն է. 153 երկրների մեջ, Հայաստանը 98-րդ տեղում է, Վրաստանը՝ 74-րդ, իսկ Ադրբեջանը՝ 94-րդ։ Հայաստանի Հանրապետությունը (ՀՀ) նորածինների սեռերի համամասնության ամենամեծ շեղում ունեցող երկրների թվում է։

29. **Գերակայություն** Կառավարման բոլոր ոլորտներում և որոշումների ընդունման մակարդակում գենդերային խտրականության հաղթահարում. Կանանց առաջխաղացման ազգային մեխանիզմի կատարելագործում, կանանց և տղամարդկանց հավասար ու լիարժեք մասնակցության հնարավորությունների ապահովում և ընդլայնում

30. Սույն գերակայության նպատակները սահմանվել են ոլորտում առկա և քարտեզագրված խնդիրների հիման վրա՝ ստացված առաջնային և երկրորդային տվյալների վերլուծությունից, ինչպես նաև գենդերային հավասարություն, բազմազանություն, մասնակցայնություն և ներառական կառավարում և ժողովրդավարություն խթանող տեսլականի և սկզբունքների հիման վրա։

31. Գերակայության շրջանակում բոլոր ջանքերն ուղղված են պետական քաղաքականության և կառավարման բոլոր ոլորտներում գենդերային հավասարության հասնելուն, մասնավորապես՝ մասնակցային, ներառական և հասանելի քաղաքական դաշտ ապահովելուն, որտեղ կանայք և տղամարդիկ, այդ թվում՝ տարբեր խոցելի խմբերի ներկայացուցիչները, կարող են ակտիվորեն և լիարժեք մասնակցել և հավասարապես նշանակալից ազդեցություն ունենալ կառավարման մակարդակում և որոշումների կայացման գործընթացների վրա:

32. **Իրավիճակի նկարագիր և գնահատում**

Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում կանանց քաղաքական մասնակցության ցուցանիշներում արձանագրվել է որոշակի առաջընթաց, այնուամենայնիվ, այս ոլորտում գենդերային հավասարությունը դեռևս շարունակում է մնալ հիմնական մարտահրավերներից մեկը, իսկ խնդիրների հարացույցը ուրվագծում է այն շրջանակը, որը սույն գերակայության նպատակների համար հիմք է հանդիսանում:

33. 2023 թվականի Կանայք քաղաքականության մեջ ցուցանիշի համաձայն՝ Հայաստանը զգալիորեն բարելավվել է իր դիրքերը՝ հիմնականում ի շնորհիվ կանանց թվի աճին Ազգային ժողովում: Այսպես, եթե, ըստ 2020 թվականի Կանայք քաղաքականության մեջ զեկույցի տվյալների, 189 երկների հարացույցում Հայաստանը գտնվում էր 81-րդ տեղում՝ կանայք ազգային ժողովում ենթացուցիչով, ապա 2023 թվականին, նույն ենթացուցիչի համաձայն, 186 երկների հարացույցում Հայաստանը զբաղեցնում է 43-րդ տեղը:
34. Նմանատիպ տվյալներ արձանագրվել են նաև՝ համաձայն Գենդերային խզման ցուցանիշի ամենամյա զեկույցների. 2020 թվականի կանանց քաղաքական հզորացման ենթացուցանիշով՝ 152 երկների ցանկում Հայաստանը գտնվել է 98-րդ տեղում[2], իսկ արդեն 2023 թվականին Հայաստանը զգալի աճ է գրանցել՝ գտնվելով 61-րդ տեղում: Սակայն գործադիր իշխանության առանցքային մարմինների անդամների շարքում կանայք շարունակում են հիմնականում բացակայել: Այսպես, Հայաստանի Հանրապետության Վիճակագրական ծառայության տվյալների համաձայն՝ 13 նախարարներից միայն 2-ը, իսկ 46 փոխնախարարներից միայն 10-ն են կանայք: Մինչդեռ նախարարությունների աշխատակազմերի մեծամասնությունը, այն է՝ հիմնական աշխատանք իրականացնող կազմը, կանայք են՝ շուրջ 59%:[3]
35. Կանանց թիվը համեմատաբար մեծ է Ներքին գործերի նախարարության արտակարգ իրավիճակների ծառայությունում (69%), Առողջապահության (69%) և Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններում (68%):
36. Կանանց ներգրավվածությունն առավել ցածր է Պաշտպանության (42%) և Արտաքին գործերի (52%) նախարարություններում:

37. Կանանց թիվը գրեթե երկու անգամ ավելի փոքր է ընդհանուր դատավորների շրջանում (31%), ինչպես նաև Հայաստանի

Հանրապետության սահմանադրական դատարանի դատավորների շրջանում (11%):[4]

38. Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կոռպուսում դեսպանների մեջ կանայք 12% են կազմում:
39. Կանայք շարունակում են ներկայացված չլինել անվտանգային հիմնահարցերի գործընթացներում:
40. Կանանց ներկայացվածությունը տեղական ինքնակառավարման մարմիններում ևս մնում է բավականին ցածր. Հայաստանում չկա կին մարզպետ, համայնքապետարանների ղեկավարների շրջանում կանայք միայն 4%-են կազմում, ավագանու անդամների մեջ՝ 26%-ը[5],: Խնդրի պատճառը կարծրատիպային մտածելակերպն է, ինչպես նաև՝ սոցիալական երաշխիքների բացակայությունը:

41. Հայաստանում Ազգային ժողովում կանայք կազմում եմ 36%: Այնուհանդերձ, 8-րդ գումարման Ազգային ժողովի ղեկավար կազմում անհամաչափ ցածր է  կին պատգամավորների ներկայացվածությունը: Կանայք ընդամենը5%-ով են ներկայացված Ազգային ժողովի խորհրդի կազմում՝  գլխավորելով  վերջինիս 12 մշտական հանձնաժողովներից միայն  երկուսը:[6]
42. Հարկ է նաև նշել, որ քվոտաների համակարգի ներդրումը ըստ էության դրական ազդեցություն է թողել կանանց քաղաքական ներկայացվածության վրա, սակայն քանակական ազդեցությունից բացի անհրաժեշտ են նաև որակական փոփոխություններ: 2020 թվականին ընդունված Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքի փոփոխություններով, բացի Երևանի, Գյումրի և Վանաձորի ՏԻՄ ընտրություններից, կուսակցությունների ցուցակներում թեկնածուների սեռերի առնվազն 30/70 հարաբերակցություն սահմանող քվոտան կիրառվել է նաև համամասնական ընտրակարգով անցկացվող 4000-ից ավելի ընտրող ունեցող համայնքների ՏԻՄ ընտրություններում, ինչի հետևանքով կանանց ներկայացվածությունը ՏԻՄ-երում աճել է:[7]
43. 2023 թվականի Գենդերային սոցիալական նորմերի ցուցանիշի համաձայն Հայաստանի բնակչության 58% որոշակի կողմնակալություն ունի կանանց քաղաքական մասնակցության վերաբերյալ: Մասնավորապես, կանանց քաղաքական մասնակցության վերաբերյալ առկա է կանանց և տղամարդկանց դերերի կարծրատիպային և խտրական մոտեցում:[8]
44. **ՄԱԿ-Կանայք և ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի համատեղ իրականացվածԱրևելյան գործընկերության երկրներում կարծրատիպերի ելակետային ուսումնասիրության տվյալների համաձայն Հայաստանում հարցված կանանց 45%-ը և տղամարդկանց 56%-ն ասել են, որ չէին ցանկանա ավելի շատ կանանց տեսնել քաղաքականության մեջ, ընդ որում, կանանց քաղաքական մասնակցության վերաբերյալ նման կողմնակալ վերաբերմունք ունի նաև 18-35 տարեկան երիտասարդների 53%-ը:**[9]
45. Քաղաքականության մեջ կանանց նկատմամբ կողմնակալ վերաբերմունքի մասին է փաստում նաև այն, որ հարցված տղամարդկանց 53%-ը և կանանց 44%-ը կարծում են, որ տղամարդիկ ավելի լավ են աշխատում բարձրագույն քաղաքական պաշտոններում, ավելի լավ քաղաքական առաջնորդներ են:[10]
46. Միաժամանակ հարկ է նաև նկատել, որ տվյալներում կարելի է

արձանագրել զգալի գենդերային տարբերություններ: Այսպես, կանանց կեսից ավելին՝ 54%-ն ասել է, որ իրենց ավելի հարմարավետ են զգում, երբ կին ղեկավար ունեն: Տղամարդկանց 35%-ն է նման կարծիք հայտնել:[11]

47. Համաձայն Միջազգային հանրապետական ինստիտուտի կողմից իրականացված հարցման արդյունքների՝ Հայաստանի բնակչության 80%-ը համարում է, որ քաղաքականության մեջ կանանց պասիվությունը պայմանավորված է կանանց զբաղվածությամբ տնային գործերով և երեխաների խնամքով: Միևնույն ժամանակ, ավելի շատ կանայք, քան տղամարդիկ համամիտ են այն մտքի հետ, որ կարևոր պատճառներից է նաև այն, որ կանայք չունեն իրենց ընտանիքների աջակցությունը (59% կանայք, 44% տղամարդիկ, համապատասխանաբար), ինչպես նաև իրենց քաղաքական կուսակցությունների աջակցությունը /50% կանայք, 40% տղամարդիկ, համապատասխանաբար):[12]
48. Մեդիան սահմանում և ներկայացնում է սոցիալական նորմեր և վարքագծի չափանիշներ՝ այս համատեքստում հասարակությանը հաճախ նաև պարտադրելով կնոջ դերի և նշանակության մասին խեղաթյուրված ընկալում և վերարտադրելով կանանց առաջընթացը, այդ թվում՝ քաղաքական ոլորտում, խոչընդոտող խտրական վերաբերմունքը, կարծրատիպերն ու միֆերը: Մինդչդեռ մեդիան կարող է աջակցել կանանց դերի բարձրացմանը հանրության շրջանում և կնոջ նշանակության մասին հանրային ընկալումների դրական փոփոխությանը:[13]

49. **Նպատակներ `**

- Քաղաքական և կառավարման ոլորտներում կանանց առաջխաղացմանն ուղղված ազգային կառուցակարգերի վերանայում և կատարելագործում:[14]
- Օրենսդիր, գործադիր, դատական իշխանության մարմիններում, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններում կառավարման ու որոշումների կայացման մակարդակներում, այդ թվում՝ ընտրովի և նշանակովի ղեկավար պաշտոններում, կանանց ներկայացվածության և մասնակցության խթանում, այդ թվում՝ օրենսդրական բարեփոխումների իրականացում:
- Կին քաղաքական գործիչների, ինչպես նաև օրենսդիր, գործադիր և դատական իշխանություններում, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրովի և նշանակովի ղեկավար պաշտոններում և որոշումների ընդունման մակարդակներում ընդգրկված կանանց զորեղացում և առաջխաղացման կառուցակարգերի բարելավում:
- Կառավարման մակարդակում և որոշումների կայացման գործընթացներում ընդգրկված կանանց և տղամարդկանց գենդերազգայունության զարգացում:
- Քաղաքական կուսակցությունների կողմից գենդերազգայուն քաղաքականությունների մշակում և պրակտիկաների կիրառում:
- Պաշտոնական բանակցային գործընթացներում, այդ թվում՝ անվտանգության և պաշտպանության ոլորտներում կանանց ներգրավվածության խթանում:

- Մեդիայի կողմից իրականացվող լուսաբանումներում գենդերազգայունության բարձրացում:

50. **Ակնկալվող արդյունքներ՝**

- Քաղաքական և կառավարման ոլորտում կանանց առաջխաղացման ազգային կառուցակարգերը բարելավված են:
- Օրենսդիր, գործադիր, դատական իշխանության մարմիններում ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններում կառավարման ու որոշումների կայացման մակարդակներում, ներառյալ՝ ընտրովի և նշանակովի պաշտոններում, կանանց ներկայացվածությունը և ընդլայնված ու լիարժեք մասնակցությունն ապահովված են, օրենսդրական դաշտը բարելավված է:
- Օրենսդիր, գործադիր, դատական իշխանություններում ղեկավար պաշտոններում և որոշումների ընդունման մակարդակում գործող կին պաշտոնյաների ազդեցության բարձրացումն ապահովված է, կարողությունները՝ զարգացած, այդ թվում՝ առաջնորդության հմտությունները՝ բարելավված:
- Կառավարման մակարդակում և որոշումների կայացման գործընթացներում կանանց նկատմամբ գենդերային կարծրատիպերը և խտրականությունը նվազեցված է, այդ թվում՝ ատելության խոսքը, իսկ կանանց և տղամարդկանց միջև միմյանց նկատմամբ ձևավորված է սոլիդարություն:
- Քաղաքական կուսակցությունների ներսում ղեկավարության և թեկնածուների ընտրության գործընթացներում ներառականությունը և բազմազանությունը հաստատված է, մասնավորապես՝ կանանց քաղաքական ակտիվ ներգրավվածությունն է ապահոված, այդ թվում՝ տարբեր խոցելի խմբերից:
- Պաշտոնական բանակցային գործընթացներում, այդ թվում՝ անվտանգության և պաշտպանության ոլորտներում, գրանցված է կանանց ներկայացվածության աճ, դրանից բխող ընդհանուր բանակցային գործընթացների գենդերազգայունությունը բարձրացված է:
- Մեդիայի կողմից իրականացվող լուսաբանումները գենդերազգայուն են, կանանց հավասարակշռված ներկայացվածությունն ապահովված է:

51. **Հիմնական ցուցանիշներ՝**
52. Հանրային ծառայողների գենդերազգայունության բարձրացում:
53. Բարելավված օրենսդրական դաշտի առկայություն:
54. Ոլորտային քաղաքականություններում գործող քվոտաների բարելավում:
55. Հանրային քաղաքականության շրջանակում, ոլորտային ռազմավարություններում գենդերային ազդեցության համակարգի առկայություն:
56. Հանրային ծառայողների պատրաստման և վերապատրաստման ծրագրերում գենդերազգայունություն ապահովող թեմաների և

ուսումնական նյութերի թիվ։
57. Հանրային ծառայողների իրականացված վերապատրաստումների թիվ՝ գենդերային գիտելիքի և կարողությունների վերաբերյալ։
58. Գենդերային թեմաներին և խնդիրներին առնչվող Հանրային իրազեկման միջոցառումների թիվ և մասնաբաժին։
59. Օրենսդիր, գործադիր և դատական իշխանություններում, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրովի և նշանակովի ղեկավար պաշտոններում և որոշումների ընդունման մակարդակներում ընդգրկված կանանց թիվ և մասնաբաժին։

52. **Գերակայություն** Սոցիալ-տնտեսական բնագավառում՝ աշխատաշուկայում, տնտեսության տարբեր ճյուղերում, աշխատանքային գործունեության ձևերում գենդերազգայուն մոտեցումների խրախուսում, աշխատուժի գենդերային խզվածքի նվազեցում և աշխատանքի պաշտպանության կառուցակարգերի բարելավում։

53. Սույն գերակայության շրջանակում բոլոր ջանքերն ուղղված են աշխատաշուկայի, զբաղվածության, տնտեսության ոլորտում գենդերազգայուն մոտեցումների խրախուսմանը, աշխատուժի սեռային խզվածքի նվազեցմանը, կանանց սոցիալ-տնտեսական ակտիվության խրախուսմանը և աշխատանքի պաշտպանության կառուցակարգերի բարելավմանը, ներառյալ՝ աշխատանքային գործունեության մեջ խնամառության աշխատանքի պաշտպանությանը։
54. Այս գերակայության շրջանակում կարևոր է (երիտասարդ) կանանց և (երիտասարդ) տղամարդկանց սոցիալ-տնտեսական կյանքում հավասար ներգրավվածության և առաջխաղացման խթանումը, սակայն ոլորտում առկա իրավիճակի վերլուծությունը ցույց է տալիս, որ կանայք (այդ թվում՝ երիտասարդ, հաշմանդամություն ունեցող, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ, գյուղաբնակ, տեղահանված, փախստական կամ փախստականի նման կարգավիճակ ունեցող, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով ապրող կանայք և այլ զգայուն, խոցելի և մարգինալացված խմբերից) ավելի խոցելի խումբ են, և վերջիններիս ներգրավվածության և առաջխաղացման հարցը դառնում է առանցքային և առանցքային։

- **Իրավիճակի նկարագիր և գնահատում**

Կանանց և տղամարդկանց զբաղվածության ոլորտում հավասար հնարավորությունների ապահովումը, աշխատաշուկայում կանանց մասնակցության բարձրացումը, մասնագիտական առաջխաղացումը, մարդկային կապիտալի առավել նպատակային կառավարումն առանցքային գերակայություն է, որն ուղղված է կանանց տնտեսական ներուժի իրացմանը, սոցիալ-տնտեսական միջավայրում վերջիններիս լիարժեք ինտեգրմանն ու

ներառականության խթանմանը։

- Այս գերակայությունն առանցքային նշանակություն ունի սոցիալ-տնտեսական կյանքում կանանց մասնակցության կառուցակարգերի բարելավման և առկա մարտահրավերների լուծման առումով։

57. Ռազմավարական առումով առաջադրված նպատակներին համահունչ առկա է որոշակի առաջընթաց։ Այսպես, համաձայն 2023 թվականի Համաշխարհային գենդերային զեկույցի՝ կանանց տնտեսական գործունեության ոլորտում, ընդհանուր առմամբ, առաջընթաց է գրանցվել։ Մասնավորապես, տնտեսական հնարավորությունների ենթանիշի ներքո Հայաստանը զբաղեցրել է 52-րդ տեղը՝ նախորդ տարվա 84-րդի համեմատ։

- 2017 թվականի համեմատ՝ 2021 թվականին միջին ամսական աշխատավարձերի (վաստակների) սեռային խզվածքը կրճատվել է1 տոկոսային կետով։ 2021 թվականի ՀՀ-ում կանանց միջին վաստակը կազմել է տղամարդկանց վաստակի 64.5%-ը կամ վարձատրության սեռային խզվածքը կազմել է 35.5%։
- Այնուամենայնիվ, այդ առաջընթացին զուգահեռ, դեռևս առկա են լրջագույն մարտահրավերներ, որոնք հիմնավորված են հետևյալ տվյալներով. ձեռներեցության ծրագրերը, որոնք ուղղված են կանանց սոցիալ-տնտեսական խթանմանը, կարևոր են, սակայն պետք է համալրվեն նաև զբաղվածության այլ ոլորտի նպատակուղղված ծրագրերով։ Սա պայմանավորված է նրանով, որ բնակչության, այդ թվում՝ կանանց շրջանում ոչ բոլորն ունեն հնարավորություն կամ ցանկություն ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու՝ պայմանավորված մի շարք գործոններով։

60. Չնայած կանանց աշխատուժի տնտեսական հզորացմանն ուղղված ընթացիկ ծրագրերին, 2022 թվականին կանանց և տղամարդկանց աշխատուժի մասնակցության մակարդակի սեռային խզվածքը 2021 թվականի համեմատ աճել է6 տոկոսային կետով՝ կազմելով 32.3%։ Այն շարունակում է բարձր մնալ հատկապես 25-34 տարիքային խմբում (41%)՝ թեև 2021 թվականի համեմատ արձանագրվել է 1 տոկոսային կետով նվազում։ Այս տարիքային խմբում խզվածքի բարձր ցուցանիշը հիմնականում պայմանավորված է ընտանեկան պարտականություններով ծանրաբեռնվածությամբ[15], երբ հատկապես դժվարանում է աշխատանք-ընտանիք հավասարակշռումը։ Սա տարիքային այն միջակայքն է, երբ կանայք սովորաբար ընտանիք են կազմում և խնամում փոքր երեխաներին, որի արդյունքում նրանց զգալի մասը ժամանակավորապես դադարեցնում է աշխատանքը կամ հետաձգում աշխատանք փնտրելու գործընթացը։[16]
61. Գենդերային խզվածքն ի վնաս կանանց շարունակում է բարձր մնալ նաև զբաղվածության մեջ. 2022 թվականի դրությամբ 15-74 տարեկան կանանց զբաղվածության մակարդակը կազմել է 42%, մինչդեռ նույն տարիքի տղամարդկանցը՝ 62%։ Երկու սեռերի դեպքում էլ ցուցանիշը 2021 թվականի համեմատ բարելավվել է։
62. Գործատուների և ինքնազբաղվածների մեծամասնությունը տղամարդիկ են (64%), մինչդեռ առանց վարձատրության

աշխատողների մեջ կանայք կրկնակի անգամ գերազանցում են տղամարդկանց (67%)։ Այն ներառում է նաև գյուղատնտեսական ոլորտում գործունեությունը, որտեղ կանայք ավելի հաճախ ներգրավված են ավանդական, ցածր արտադրողական գյուղատնտեսական գործունեության մեջ[17]: Այս խմբում հատկապես խոցելի են գյուղաբնակ կանայք, քանի որ շատ հաճախ հողի կամ ագրոբիզնեսի սեփականատեր չեն և աշխատում են որպես ցածր հմտություն ունեցող բանվորական աշխատուժ՝ նվազագույն վարձատրությամբ կամ առանց դրա՝ որպես ընտանեկան գործում աջակցող, չվարձատրվող անդամ։

63. Աշխատաշուկայում սեռային խզվածքի նվազեցմանն ուղղված քայլեր կատարվել են, սակայն հիմնականում արվել են փոքր ծավալի մեծ սփռվածության ծրագրեր, որոնք ընդգրկուն ծածկույթ չունեն։ Մինչդեռ կարևոր է կանանց զբաղվածության ռազմավարական պլանավորմանն ուղղված համալիր, բնակչության լայն զանգվածներին ներառող մոտեցումներ։

64. Ղեկավար պաշտոններում գենդերային խզվածքը շարունակում է մնալ կայուն բարձր. 2022 թվականի դրությամբ ղեկավար պաշտոն զբաղեցնող տղամարդիկ գերազանցել են նույն խմբի կանանց4 անգամ։ Մի քանի գործոններ նպաստում են այս անհավասարակշռությանը։ Դրանց լուծումը պահանջում է նպատակաուղղված և կայուն ջանքեր։ Այդպիսիք են շարունակում մնալ, օրինակ՝ թե՛ հասարակության, թե՛ գործատուների կողմից գենդերային դերերի և կարողությունների մասին ուղղակի և անուղղակի կողմնակալ, կարծրատիպային մոտեցումները, աշխատանք-ընտանիք հավասարակշռման դժվարությունները։ Կանայք հաճախ բախվում են մարտահրավերների՝ գտնելու մենթորներ, երաշխավորողներ կամ հովանավորներ, ովքեր կարող են օգնել նրանց հիմնելու սեփական ձեռնարկատիրական գործունեությունը, նույնիսկ եթե այն սկզբնական շրջանում կլինի տնտեսության ոչ ֆորմալ հատվածում, կամ՝ առաջադիմել իրենց կարիերայում։

65. Բացի վերը նշված օբյեկտիվ սահմանափակումներից, աշխատաշուկայում լիարժեք ներառման և առաջխաղացման հարցում կա նաև խտրական մոտեցման խնդիր. գենդերային դերերը և կարծրատիպերը հանգեցնում են չգիտակցված կողմնակալության՝ խոչընդոտելով տնտեսության տարբեր ճյուղերի մեջ կանանց ներուժի առավել ամբողջական իրացմանը։

66. Կանայք ավելի շատ են ներգրավված ոչ տեսանելի, թերգնահատված չվճարվող աշխատանքի ձևերում և ընտանիքի անդամների խնամքի աշխատանքում։ 2022 թվականի դրությամբ հիմնականում սեփական սպառման համար ապրանքների արտադրությամբ (գյուղմթերքի, կաթնամթերքի  արտադրություն, պահածոների, ձավարեղենի պատրաստում, հագուստի կարում և այլն) և ծառայությունների մատուցմամբ (տնային գործեր, երեխայի, ընտանիքի հիվանդ, ծեր կամ հաշմանդամություն ունեցող անդամի խնամք և այլն)[18] զբաղվածների 64%-ը եղել են կանայք։ Սա վկայում է այն մասին, որ հասարակության մեջ առկա են մշակութային, պատմականորեն արմատացած գենդերային դերեր և նորմեր՝ մի կողմից, մյուս կողմից՝ շատ աշխատատեղերում երկար աշխատանքային ժամերը խոչընդոտ են

աշխատանքային, անձնական և ընտանեկան կյանքի հավասարակշռման համար, ինչն էլ նրանց ստիպում է գերադասել չվճարվող աշխատանքը՝ վճարովի աշխատանքի փոխարեն:

67. Երկարատև գործազրկության մակարդակը (ԵԳՄ) հատկապես բարձր է կանանց շրջանում՝ կազմելով իգական սեռի գործազուրկ բնակչության 57%-ը: Տղամարդկանց դեպքում ԵԳՄ-ն կազմել է 51%: Երկարատև գործազրկությունը կարող է հանգեցնել կանանց տնտեսական խոցելիության, հատկապես, եթե նրանք իրենց տնային տնտեսությունների հիմնական կամ միակ կերակրողն են: Կանայք հաճախ ավելի քիչ են վաստակում, քան տղամարդիկ, և աշխատավարձի այս տարբերությունը կարող է խորացնել երկարաժամկետ գործազրկության հետ կապված ֆինանսական լարվածությունը:
68. Տարբեր օբյեկտիվ պատճառներով (մասնավորապես՝ մասնագիտական փորձի տևական բացակայություն, հմտությունների կորուստ և շուկայի կարիքների հետ անհամապատասխանություն) 30-ից 40 տարեկան կանայք դառնում են անմրցունակ և դուրս են մնում աշխատաշուկայից: Հատկապես այս խումբն է պահանջում հատուկ աջակցության միջոցներ՝ աշխատաշուկա վերաինտեգրվելու նպատակով:
69. Երբ կանայք հնարավորություն են ստանում ներառվել աշխատաշուկայի մեջ, կարևոր է նրանց շարունակական կրթության խրախուսումը, ընտրված ոլորտներում մասնագիտացումները: Մասնավորապես, տեքստիլի արդյունաբերության ոլորտում աշխատող կանանց թիվը աճում է, սակայն կարևոր է, որ կանայք   կարողանան նաև մասնագիտական առաջխաղացում ունենալ իրենց նախընտրած ոլորտներում:
70. Բիզնես գործունեության մեջ ներգրավված կանայք հիմնականում ունեն հետևյալ խնդիրները՝

- ֆինանսների, այդ թվում՝ վարկային միջոցների հասանելիություն,
- կարողությունների շարունակական զարգացում, այդ թվում՝ բիզնես գրագիտութուն, հմտությունների զարգացում, թվային գրագիտություն,
- շուկաների հասանելիություն, այդ թվում՝ առցանց շուկաների հասանելիություն և մարկետինգային հետազոտություններ:

71. Կանանց համար ձեռնարկատիրության ոլորտում խոչընդոտ է գրավի միջոց չունենալը: Հատկապես մարզերում կանայք չունեն դրամական հաշիվներ և գույք, որպեսզի կարողանան նաև վարկային միջոցներ ներգրավել: [19]
72. Կանանց աշխատանքային իրավունքների պաշտպանության մեխանիզմները դեռևս հասանելի և մատչելի չեն. դրական առաջընթաց է աշխատանքային օրենսդրության փոփոխությունները, այդ թվում՝ սեռական ոտնձգության դեմ ուղղված քայլերի ամրագրումն աշխատանքային օրենսդրության մեջ, սակայն դեռևս պարզ չէ, թե դա պրակտիկայում ինչ կառուցակարգով է գործելու, կամ ինչպես է իրականացվելու այդ հաղորդումը:[20]
73. Երիտասարդ կանանց համար կարևոր է մասնագիտական կողմնորոշումը ավանդականորեն ընդունված հմտությունները,

մասնագիտությունները կարիք ունեն վերանայման՝ հատկապես թվային հմտությունների զարգացման դեպքում առցանց աշխատանքի անցնելու հնարավորությամբ հեռանկարով պայմանավորված։

74. Աշխատող կանանց համար կարևոր է աշխատանքի պաշտպանությունը և երաշխիքները, այդ թվում՝ աշխատանքային միջավայրում էթիկական գենդերազգայուն սոցիալական պատասխանատվություն ձևավորող կանոնակարգերը։
75. Մի շարք որակական հետազոտություններ փաստում են ՀՀ աշխատաշուկայում ամուսնական կարգավիճակի և հղիության հիմքով խտրականության, ինչպես նաև գենդերային հիմքով բռնության և սեռական ոտնձգության դեպքերի մասին, դրանց մասշտաբի վերաբերյալ հստակ քանակական տվյալներ գոյություն չունեն, քանի որ դեպքերի մեծամասնությունը կրում է քողարկված բնույթ և չի զեկուցվում իրավապահ մարմիններին։[21]
76. Այսպիսով, ոլորտում առկա հիմնախնդիրների վերլուծությունը ցույց է տալիս, որ հատկապես կանանց, մասնավորապես՝ առավել խոցելի խմբերի համար, անհրաժեշտ են թիրախային և երկարաժամկետ ազդեցության միջոցառումներ, որպեսզի դրանք կենսունակ լինեն կանանց տնտեսական ակտիվության երկարաժամկետ ապահովման, նրանց ներառման, խրախուսման և իրացման համար։
77. Մասնավորապես, սոցիալապես անապահով, մարգինալացված խմբերի, այդ թվում՝ կանանց կողմից ղեկավարվող տնային տնտեսություններում միակ աշխատուժ հանդիսացող կանանց, աշխատաշուկայում անմրցունակ և մասնագիտություն չունեցող երիտասարդ մայրերի, տեղահանված կանանց և փախստականների, 30-40 տարեկան աշխատաշուկայից դուրս մնացած կանանց, գյուղական բնակավայրերում ապրող, մասնագիտական կրթություն չունեցող մինչև 30 տարեկան կանանց  աշխատաշուկա ներգրավվելուն ուղղված քայլերը, ինչպես նաև կանանց աշխատանքի պաշտպանությունը  ռազմավարության այս գերակայության նորարարական ուղղություններն են, որոնց հիման վրա սահմանվել են սույն գերակայության նպատակները։[22]

78. **Նպատակներ՝**

- Երիտասարդ և միջին տարիքի աշխատող ծնողների՝ մայրերի և հայրերի աշխատանքի հավասար հնարավորությունների ապահովման նպատակով երեխաների խնամքի, նախադպրոցական կրթության և ցերեկային հոգածության ծառայությունների ընդլայնում և հասանելիության բարելավում:
- Աշխատաշուկայում անմրցունակ տարիքային բոլոր խմբերի կանանց՝ սոցիալապես անապահով, հաշմանդամություն ունեցող, ազգային փոքրամասնություններին պատկանող, բռնի տեղահանված, փախստական, փախստականի նման կարգավիճակ ունեցող և այլ մարգինալացված խմբերի ներկայացուցիչների ոչ ֆորմալ, շարունակական, այդ թվում՝ մեծահասակների  կրթության ծրագրերի միջոցով կանանց և մյուս խոցելի խմբերի զբաղվածունակության[23] բարձրացում:

- Առաջին անգամ աշխատաշուկա մտնող կանանց համար խրախուսման և աջակցության կառուցակարգի և հայեցակարգի ստեղծում՝ ըստ բնակության վայրի առանձնահատկությունների և ենթակառուցվածքների:
- Կանանց ձեռնարկատիրական գործունեության համար առավել բարենպաստ միջավայրի զարգացում և շարունակական բարելավում:
- Երիտասարդ աղջիկների և տղաների մասնագիտական կողմնորոշման, կարիերայի պլանավորման միջոցառումների մեջ մասնագիտության և աշխատանքի ընտրության կարծրատիպերի և խտրական մոտեցումների վերացում՝ հաշվի առնելով անձի իրավունքը և զարգացման ներուժը:
- Կանանց աշխատանքի իրավական պաշտպանության, արժանապատիվ աշխատանքի կառուցակարգերի և դրանց կիրարկման պայմանների ապահովում:
- Արդիականացված գյուղատնտեսական ծրագրերում կանանց մասնակցության պայմանների խրախուսում:
- Տնտեսության տարբեր ճյուղերում և զբաղվածության տեսակներում առկա գենդերային խզվածքի  կրճատում և համաչափ զարգացման հնարավորությունների խրախուսում:

- **Ակնկալվող արդյունքներ՝**
- Աշխատող ծնողների՝ մայրերի և հայրերի համար ՀՀ ողջ տարածքում երեխաների տարբեր տեսակի խնամքի և ցերեկային ծառայությունների մատչելիությունը և հասանելիությունն ապահովված է:
- Խնամառության բարձր ցուցիչ ունեցող ընտանիքներում չվճարվող խնամքի աշխատանքի վճարման հայեցակարգը մշակված է և ներդրված է խնամքի ծառայությունների ընդլայնման ոլորտային ծրագրերում:
- Տնային տնտեսության վարման աշխատանքների, այդ թվում՝ երեխայի, ընտանիքի հիվանդ, տարեց անդամի, աջակցության կարիք ունեցող այլ անձանց խնամքի աշխատանքների մեջ գենդերային խզվածքը կրճատված է:
- Առաջին անգամ աշխատաշուկա մտնող կանանց, խոցելի խմբերին անհրաժեշտ զբաղվածունակության և մրցունակության համար մասնագիտական, շարունակական, ոչ ֆորմալ կրթությունն առկա է և հասանելի:
- Առաջին անգամ աշխատաշուկա մտնող և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող կանանց համար առկա է բարելավված կայուն և բարենպաստ միջավայր:
- Մասնագիտության և աշխատանքի ընտրության գործընթացներում կարծրատիպերը և խտրականությունը հաղթահարված է:
- Կանանց արժանապատիվ աշխատանքի իրավական պաշտպանության, ինչպես նաև դրանց գործունության պայմաններն ապահոված են:
- Գյուղատնտեսության ոլորտում կանանց աշխատուժի կազմակերպման և իրացման պայմանները փոխակերպված, բարելավված են:
- Տնտեսության տարբեր ճյուղերում և զբաղմունքի տեսակներում գենդերային խզվածքը կրճատված է:

80. **Հիմնական ցուցանիշներ՝**

- Աշխատող ծնողներին՝ մայրերին և հայրերին, մատչելի և հասանելի երեխաների նախադպրոցական ծառայությունների, խնամքի և ցերեկային հոգածության ծառայությունների թիվ:
- Խնամառության բարձր ցուցիչ ունեցող ընտանիքներում չվճարվող խնամքի աշխատանքի վճարման, հատուցման հայեցակարգի առկայություն:
- Տնային տնտեսության վարման աշխատանքների, այդ թվում՝ երեխայի, ընտանիքի հիվանդ, տարեց անդամի, աջակցության կարիք ունեցող այլ անձանց խնամքի աշխատանքների մեջ գենդերային խզվածքի ցուցանիշ:
- Առաջին անգամ աշխատաշուկա մտնող կանանց, խոցելի խմբերին անհրաժեշտ զբաղվածունակության և մրցունակության համար մասնագիտական, շարունակական, ոչ ֆորմալ կրթության, մենթորության աշխատանքի ներգրավման հասանելի, համապետական ծրագրերի թիվ:
- Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձանց մեջ կանանց մասնաբաժին:
- Կանանց աշխատանքի պաշտպանության, այդ թվում՝ արժանապատիվ աշխատանքի իրավական պաշտպանության, աշխատավայրում սեռական ոտնձգությունից պաշտպանության կառուցակարգերի առկայություն:
- Տնտեսության տարբեր ճյուղերում և զբաղմունքի տեսակներում գենդերային խզվածքի ցուցանիշ:

81. **Գերակայություն** Կրթության և գիտության ոլորտում գենդերային խտրականության հաղթահարում, կանանց և տղամարդկանց լիարժեք մասնակցության խթանում, հավասար հնարավորությունների ընդլայնում և բարենպաստ միջավայրի ամրապնդում

82. Սույն գերակայության շրջանակում բոլոր ջանքերն ուղղված են ոլորտում աղջիկների և տղաների, կանանց և տղամարդկանց հավասարակշռված ներկայացվածությանն ու արդյունավետ մասնակցությանը՝ հանուն անհատի ներուժի բացահայտման և զարգացման, ինչպես նաև հասարակության և պետության առաջխաղացման:
83. Այս գերակայության շրջանակում գտնվող խնդիրների վերլուծությունը ցույց է տալիս, որ աղջիկներն ու կանայք, ներառյալ՝ բոլոր մարգինալացված խմբերից, ավելի խոցելի են և շարունակում են ոլորտի որոշ մակարդակներում թերներկայացված մնալ: Մյուս կողմից, կրթության որոշ ոլորտներում կանայք շարունակում են գերակայել՝ կրկին պայմանավորված գենդերային կարծրատիպերով և խտրականությամբ: Օրինակ, մանկավարժության մեջ, մասնավորապես՝ նախադպրոցական ուսումնական հաստատություններում և

տարրական դպրոցներում, արական սեռի մանկավարժներ գրեթե չկան։[24]

84. Կանայք շարունակում են թերներկայացված լինել նաև գիտության ոլորտում։ Ոլորտի այս և մնացյալ խնդիրները ներկայացված են մանրամասն ստորև։

85. **Իրավիճակի նկարագիր և գնահատում.**

ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի N 136-Ն որոշմամբ հաստատվեց Հանրակրթության նոր չափորոշիչը։

86. Հանրակրթության պետական չափորոշչի և առարկայական ծրագրերի վերանայման արդյունքում գենդերային բաղադրիչը ներառվել է միջնակարգ կրթության կարողունակություններում, մասնավորապես՝ «Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակության» մեջ։
87. Հանրակրթության պետական չափորոշչի և առարկայական ծրագրերի վերանայման ընթացքում գենդերային բաղադրիչը ներառվել է նաև հանրակրթական ծրագրերի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքներում։
88. Որոշ կարողունակություններ և խաչվող հասկացություններ թելադրում են այդ բաղադրիչի ներմուծում և արտացոլում նաև ուսումնական նյութերում, մասնավորապես, «Հասարակագիտություն» առարկայի նոր չափորոշչում և ծրագրում (7-12-րդ դասարաններ)**:**
89. Մինչև 2028 թվականը հանրակրթության չափորոշիչները ներդրվելու են ՀՀ բոլոր մարզերում, փորձարկումը կատարվել է Տավուշի մարզում։
90. Միաժամանակ հանրակրթության նոր չափորոշչի վերանայման շրջանակում մշակվել է «Առողջ ապրելակերպի» նոր դասընթացը, որը փորձարկվում է Տավուշի մարզի հանրակրթական դպրոցներում։ՀՀ Տավուշի մարզում Հանրակրթության պետական չափորոշչի փորձարկման շրջանակներում, «Առողջապրելակերպ» պարտադիրխմբ ակիհամարմշակվածծրագրումևչափորոշչումներառվածենթեմաներևվե րջնարդյուքներ, որոնքվերաբերումենգենդերայինբաղադրիչին։
91. 2022 թվականին «Առողջ ապրելակերպ» դասընթացը վարող ուսուցիչների համար կազմակերպվել են 5-օրյա վերապատրաստման դասընթացներ, որոնց մասնակցել են Տավուշի մարզի 76 դպրոցների ուսուցիչներ՝ 2023 թվականին 6-րդ, 8-րդ և 11-րդ դասարանների ծրագրերը փորձարկելու նպատակով։[25]
92. Հանրակրթության նոր չափորոշչի համաձայն՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակը իրականացվում է հանրակրթական հաստատությունների 5-11-րդ դասարաններում՝ տարեկան 17 ժամ տևողությամբ։
93. Վերապատրաստման դասընթացներ իրականացվելու են բոլոր դասարանների «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակը վարող մասնագետների համար։

94. «Ես և շրջակա աշխարհը» առարկայի ծրագրում կա առանձին բաժին՝ «Սեռային կարծրատիպեր»։

95. «Գրականություն» առարկայի ծրագրում ավելացել են կին գրողները:

96. Մանկավարժների շրջանում գենդերային հավասարության թեմաների վերաբերյալ իրազեկվածության բարձրացման և գենդերային զգայունության ձևավորման նպատակով՝ «Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների ներառող դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագրի շրջանակներում, 2021 թվականին մշակվել է «Գենդերային բաղադրիչի ներառումը ուսուցիչների՝ ներառող դասավանդման կարողությունների շարունակական զարգացման համատեքստի մեջ» մոդուլային դասընթացը՝ ըստ հետևյալ թեմաների՝

- «Գենդեր» հասկացություն. իմաստաբանական դաշտ:
- Քննադատական մտածողության կիրառումը գենդերազգայուն կրթության վերաբերյալ հարցերը քննելիս:
- Գենդերացված ուսումնառություն և գենդերազգայուն ու գենդեր-արձագանքող կրթություն:
- Գենդերային խնդիրներ և կրթություն. օրենսդրական դաշտ:

97. 2021 թվականից առ այսօր իրականացվում են «Գենդերային բաղադրիչի ներառումը ուսուցիչների՝ ներառող դասավանդման կարողությունների շարունակական զարգացման համատեքստի մեջ» թեմայով դասընթացներ, որոնց մասնակցել են ՀՀ բոլոր մարզերի և Երևան քաղաքի ծրագրում ընդգրկված 443 դպրոցների մասնագետներ և աշխատողներ:
98. Կրթությունից դուրս մնացած բոլոր երեխաների բացահայտման մեխանիզմի սահմանման նպատակով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 11-ի N 154-Ն որոշմամբ ընդունվել է «Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման և ուղղորդման կարգը», որը 2023 թվականին լրամշակվել է: Գործարկվել է նաև «Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման» էլեկտրոնային ենթահամակարգը:[26]
99. Համընդհանուր ներառականության գործընթացի շրջանակում, ՀՀ ՏՄԱԿ-ների կողմից իրականացվել է ԿԱՊԿՈՒ երեխաների կարիքների գնահատում, ՀՀ տարբեր մարզերում կրթությունից դուրս մնացած երեխաների իրավունքները վերականգնվել են: Սակայն գործող ընթացակարգերը դեռևս հնարավորություն չեն ընձեռում բացահայտել կրթությունից դուրս մնացած բոլոր երեխաներին, ինչպես նաև նրանց դուրս մնալու պատճառները և ներառել նրանց հանրակրթական դպրոց:
100. Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերման աշխատանքները պետք է շարունակական և ինտենսիվ բնույթ կրեն ամբողջ ՀՀ տարածքով: Այս առումով անհրաժեշտ է պարբերաբար հավաքագրել տվյալներ ամբողջ ՀՀ տարածքից, ինչպես նաև ուսումնասիրել կրթությունից դուրս մնալու պատճառները, այդ թվում՝ գենդերային, որին անդրադարձ է կատարում նաև Կանանց նկատմամբ խտրականության վերացման հանձնաժողովն իր 1913-րդ և 1915-րդ նիստերին, որը մանրամասն ներկայացվելու է ստորև:[27]
101. 9 բուհում և 2 քոլեջում ակտիվ քաղաքացիության, ժողովրդավարական կառավարման, գենդերային հավասարության և մարդու իրավունքների մասին գիտելիքների, հմտությունների և կարողությունների ձևավորման

նպատակով իրականացվել է «Ներգրավված քաղաքացի» դասընթացը և վերաիրատարակվել է դասընթացի ուսումնական նյութը:

102. 2021 թվականի ընթացքում «Գենդերային հավասարություն» թեմայով դասընթացներ է կազմակերպվել ՀՀ ոստիկանության կրթահամալիրի սովորողների համար:

103. 2022 թվականի հոկտեմբերի 12-ին և 13-ին տեղի ունեցած Կանանց նկատմամբ խտրականության վերացման հանձնաժողովի 1913-րդ և 1915-րդ նիստերի ընթացքում[28] քննարկվել է Հայաստանի յոթերորդ պարբերական զեկույցը (CEDAW/C/ARM/7), որի վերաբերյալ Կանանց նկատմամբ խտրականության վերացման հարցերով կոմիտեն իր եզրափակիչ դիտարկումներում բարձր է գնահատում Հայաստանի ջանքերն ու հանձնառությունը` խթանելու գիտության և կրթության ոլորտում կանանց և տղամարդկանց լիարժեք և արդյունավետ մասնակցությունը և հավասար հնարավորությունները, ինչպես նաև դրական է գնահատվում 2023 թվականին դպրոցներում «Առողջ ապրելակերպ» ծրագրի վերանայումը, ինչպես նաև հանրակրթական դպրոցներում համընդհանուր ներառականության իրականացումը: Այնուամենայնիվ, գենդերայի տեսանկյունից որոշ մտահոգություններ շարունակում են մնալ ակտուալ` ոլորտի հետ կապված:

104. Մասնավորապես, խոցելի են համարվում գյուղական տարածքներում աղջիկները, ովքեր տարբեր պատճառներով, այդ թվում` գենդերային կարծրատիպերի և խտրականության, հաշմանդամություն ունենալու, վաղ ամուսնություններով, ինչպես հղիություններով պայմանավորված, կիսատ են թողնում իրենց ուսումը և դպրոցից դուրս են մնում:[29]

105. Կրթական համակարգի բոլոր մակարդակներում առկա գենդերային կարծրատիպերը և խտրականությունը աղջիկների և տղաների համար վճռորոշ դեր են ունենում մասնագիտական կողմնորոշման համատեքստում:

106. Հայաստանում վերջին տարիներին իրականացվել են գիտության, տեխնոլոգիայի, ճարտարագիտություն և մաթեմատիկայի (ԳՏՃՄ) ոլորտում աղջիկների առաջխաղացմանն ուղղված որոշ ծրագրեր, օրինակ` «Տեխնովացիա» ծրագիրը` ուղղված տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների գիտության ոլորտում աղջիկների մասնակցության խթանմանը, և այս առումով որոշ առաջընթաց գրանցվել է: Այնուամենայնիվ, աղջիկներն ու երիտասարդ կանայք շարունակում են կենտրոնացած մնալ ավանդաբար կանանց կողմից գերակշռություն կազմող ուսումնասիրության բնագավառներում և այդպես էլ հավասարապես ներկայացված չեն ԳՏՃՄ-ում, ինչպես նաև տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) ոլորտներում, ինչը նվազեցնում է նրանց զբաղվածության հեռանկարները:[30]

107. Հանրակրթության բոլոր մակարդակներում ուսումնական նյութերը շարունակում են խիստ գենդերացված մնալ, այդ թվում` թե' քանական, թե' որակական/ բովանդակային առումով:

108. Այսպես, վերջին տարիներին Հայաստանում իրականացված հետազոտությունները ևս ցույց են տալիս[31], որ դասագրքերում պատկերված աղջիկներն ու տղաները, կանայք և տղամարդիկ, շարունակում են վերարտադրել գենդերային կարծրատիպային մոդելներ:

109. Մասնավորապես, դրանցում գերակշռում են ավանդական/

կաղապարային գենդերային դերերը, այդ թվում՝ ներկայացնելով տարբեր գենդերային կարծրատիպեր ինչպես վիզուալ/ պատկերային, այնպես էլ բովանդակային մակարդակներում, որտեղ տղա և տղամարդ կերպարները ներկայացած են ազատ, անկախ, ակտիվ, ուժեղ և հնարամիտ դերերում, իսկ աղջիկ և կին կերպարները՝ ավելի թույլ, էմոցիոնալ, զգայուն, կախյալ դերերում և վիճակներում:

110. Թեև ներդրվել է հանրակրթության նոր չափորոշիչը, մշակվել է ուսումնական նոր նյութեր և դասագրքեր, այնուամենայնիվ, վերջիններս բավարար չափով գենդերազգայուն չեն։

111. Հարկավոր է, որպեսզի կրթությունը որպես միջավայր լինի ոչ միայն գրավիչ սովորելու համար, այլ նաև լինի գենդերազգայուն և ապահով՝ սովորողների համար։ Այս առումով, կրթական միջավայրում գործուն, արդյունավետ ընթացակարգերի ներդրումը կնպաստի նման միջավայրի ստեղծմանը, այդ թվում՝ ունենալով ոչ միայն խնդրին արձագանքող, այլ նաև կանխարգելիչ բնույթ։

112. Կրթության տարբեր մակարդակներում կառավարման և որոշումներ կայացնողների համակազմում կանայք շարունակում են մնալ ոչ բավարար ներկայացված, մասնավորապես՝ բարձրագույն կրթության համակարգում ղեկավար և վարչական պաշտոններ զբաղեցնողների շարքերում, այդ թվում՝ ֆակուլտետի դեկաններ, պրոռեկտորներ և ռեկտորներ, կառավարման խորհրդի մարմինների ղեկավարներ, ինչպես նաև մասնագիտական խորհուրդների նախագահներ։ Օրինակ, բուհերի մասնագիտական խորհուրդների նախագահների շրջանում կանայք կազմում են ընդամենը 16%, իսկ ռեկտորների շրջանում՝ 36%:

113. Ըստ Հայաստանի Հանրապետության Վիճակագրական կոմիտեի (ԱՐՄՍՏԱՏ) վերջին մի քանի տարիների տվյալների[32]՝ տղաների համախառն ընդգրկվածության ցուցանիշն  աղջիկների համախառն ընդգրկվածության ցուցանիշից բարձր է նախնական /արհեստագործական/ կրթության մեջ, և անհամեմատ ցածր է բարձրագույն կրթության առաջին և երկրորդ աստիճաններում: Այնուամենայնիվ, բարձրագույն կրթության մեջ որոշ մասնագիտություններում կանայք շարունակում են ոչ համաչափ ներկայացված լինել, այդ թվում՝ շրջակա միջավայր, ֆիզիկական գիտություններ, ճարտարագիտություն, տեղեկատվական և հաղորդացկության տեխնոլոգիաներ, արդյունաբերություն և տեխնոլոգիա, ճարտարապետություն և շինարարություն, գյուղատնտեսական գիտություններ, անտառային տնտեսություն, անասնաբուժություն, անվտանգության ծառայություններ:[33]

114. Պատկերը շարունակում է մտահոգիչ մնալ կրթական համակարգում դասավանդող անձնակազմի համամասնության հետ կապված։ Մասնավորապես, նախադպրոցական, հանրակրթական, նախնական և միջին մասնագիտական, բարձրագույն կրթության հաստատություններում դասավանդող անձնակազմի մեջ իգական սեռի մանկավարժական անձնակազմը գերակշռում է արական սեռի ներկայացուցիչներին:

115. Գիտության ոլորտում ժամանակավոր հատուկ միջոցներ է կիրառվում՝ խրախուսելու և ապահովելու կանանց լիարժեք մասնակցությունը գիտության ոլորտում։ Օրինակ, դրամաշնորհ է հատկացվում 4-5 անձից բաղկացած գիտահետազոտական խմբերին, որի համար պայմանը՝ խմբի ղեկավարը և խմբի՝մինչև 35 տարեկան կատարողը պետք է լինեն

կին: Այնուամենայնիվ, գիտության ոլորտում կանայք շարունակում են ոչ բավարար ներկայացված լինել:

116. Կրթություն ու կիրազեկվածությունն ազդում է մեր կյանքի որակի վրա մեր կյանքի տարբեր շրջափուլերում, այդ թվում՝ վերաբերմունքի, դիրքորոշման և արժեհամակարգի ձևավորման և զարգացման տեսանկյունից:
117. Կրթության աստիճանն ազդում է նաև այնպիսի հարցերի վրա, ինչպիսին է, օրինակ՝ երեխայի սեռի նախընտրությունը: Մասնավորապես, բարձրագույն և հետբուհական կրթություն ունեցող հարցվածների ընտանիքներում վերաբերմունքը երկու սեռի երեխայի նկատմամբ նշանակալիորեն ավելի նույնանման է, քան ավելի ցածր կրթական աստիճան ունեցող հարցվածների դեպքում: Կրթության ցածր աստիճան ունեցող կանայք ավելի հակված են մտածելու, որ իրենք հնարավորություն չունեն, որոշելու քանի դուստր և քանի որդի են ուզում ունենալ: Ցածր կրթություն ունեցողների տեսակարար կշիռը նաև բարձր է հղիության ընթացքում ուլտրաձայնային հետազոտություն չանցած հարցվողների շրջանում:
118. Այս առումով կարևորվում է առհասարակ կրթության և կրթվածության դերը, իսկ խտրականության հաղթահարմանն ուղղված աշխատանքները կարևոր է սկսել դեռևս դպրոցական տարիքից, քանի որ երեխաների մոտ կարծրատիպերը, այդ թվում՝ գենդերային կարծրատիպերը սովորաբար ամրապնդվում են 5-7տարեկան հասակում:

119. **Նպատակներ՝**

- Կրթական գենդերազգայուն միջավայրի բարելավում:
- Կրթության միջոցով ներառական ժողովրդավարական արժեքներ, դիրքորոշում և քննադատական մտածողություն ունեցող և գենդերազգայուն քաղաքացիների ձևավորում:
- Կրթության բոլոր մակարդակներում և գիտության մեջ գենդերային հավասար հնարավորությունների ընդլայնում՝ ապահովելով որակյալ կրթության և գիտության հասանելիությունն ու մատչելիությունը բոլոր աղջիկ և տղա սովորողների, կանանց և տղամարդկանց համար:
- Համընդհանուր ներառականության գործընթացի շրջանակներում գենդերազգայուն մոտեցումների շարունակական ապահովում և զարգացում:
- Կրթության և գիտության ոլորտում գենդերային խնդիրների վերհանում և արձանագրում:

120. **Ակնկալվող արդյունքներ՝**

- Կրթական միջավայրի գենդերազգայուն է:
- Հասարակության մեջ ձևավորվել է գենդերազգայուն մշակույթ, մասնավորապես՝ ներառական ժողովրդավարական արժեքներ և դիրքորոշում, քննադատական մտածողություն ունեցող և

գենդերազգայուն քաղաքացիներ:

- կրթության բոլոր մակարդակներում և գիտության մեջ գենդերային անհավասարությունը և գենդերային խտրականությունը հաղթահարված է:
- Կրթության մեջ համընդհանուր ներառականության համատեքստում գենդերազգայուն միջավայրն ապահովված է::
- Կրթության և գիտության ոլորտում առկա է գենդերային խնդիրների վերաբերյալ ուսումնասիրություններ, վերլուծություններ, համապարփակ վիճակագրություն, հրապարակված նյութեր:

121. **Հիմնական ցուցանիշներ՝**

- Կրթական հաստատություններում գենդերային գիտելիք և գենդերազգայունություն ունեցող աշխատակազմի՝ վարչական աշխատողների և դասավանդողների թիվ և մասնաբաժին:
- Կրթական հաստատությունների աշխատակազմի՝ վարչական աշխատողների և դասավանդողների համար վերապատրաստումների թիվ:
- Դասավանդողների պատրաստման և վերապատրաստման ծրագրերում գենդերազգայունություն ապահովող թեմաների և ուսումնական նյութերի թիվ:
- Հետազոտական խմբերում ներգրավված կանանց թիվ:
- Կրթության մեջ ներառված սովորողների համամասնությունը /աղջիկ տղա տոկոսային արժեքի առկայություն/:
- Աղջիկ և տղա սովորողների համամասնությունը՝ ըստ հումանիտար և տեխնոլոգիական կրթության:

135. **Գերակայություն** Առողջապահության ոլորտում կանանց և տղամարդկանց հավասար հնարավորությունների ապահովում

136. Սույն գերակայության շրջանակում բոլոր ջանքերն ուղղված են մեծացնել կանանց հասանելիությունը հիմնական առողջապահական և վերարտադրողական առողջապահական ծառայություններին, հատկապես խոցելի խմբերի, գյուղական բնակավայրերի կանանց, հաշմանդամություն ունեցող կանանց և էթնիկ փոքրամասնությունների խմբերին պատկանող կանանց համար, այդ թվում՝ պետական բյուջեից տրամադրվող հատկացումները մեծացնելու և առողջության պարտադիր ապահովագրության համակարգում ներառելու ճանապարհով:
137. Անհրաժեշտ է նաև իրազեկվածության բարձրացում և կարողությունների զարգացում առողջապահական համակարգի անձնակազմի համար՝ վերացնելու հաշմանդամություն ունեցող և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով ապրող կանանց և այլ մարգինալացված խմբերի նկատմամբ խտրականությունը՝ առողջապահական ծառայությունների

մատուցման ընթացքում։

138. Առողջապահության ոլորտում վերջին տարիներին արձանագրվել է ընդհանուր, ինչպես նաև գենդերային հավասարության ուղղվածությամբ որոշակի առաջընթաց, թեև կան խնդիրներ, որոնք շարունակում են մնալ առանցքային և պահանջում են համալիր լուծումներ։

139. **Իրավիճակի նկարագիր և գնահատում.**

- Վերջին տարիներին հասարակական կազմակերպությունների հետ համատեղ պետական համապատասխան մարմինների հետ համագործակցությամբ իրականացվել է կանանց վերարտադրողական և սեռական առողջության իրավունքների վերաբերյալ իրազեկման բարձրացում։ Մասնավորապես, Առողջապահության ազգային ինստիտուտի հետ համագործակցությամբ, «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ-ն 2019-2023թթ. կրեդիտավորված երկօրյա դասընթացի միջոցով վերապատրաստել է ավելի քան 650 գինեկոլոգ և ընտանեկան բժիշկ ՀՀ բոլոր մարզերից կանանց տարբեր խմբերին վերարտադրողական առողջության զգայուն ծառայություններ մատուցելու առանձնահատկությունների վերաբերյալ։
- Չնայած ընտանիքի պլանավորման ծառայությունների ինտեգրմանը վերարտադրողական առողջության ծառայությունների մեջ, աբորտը դեռևս մնում է ծնելիության վերահսկման հիմնական ձևերից մեկը, և կանանց և աղջիկների համար մատչելի և մատչելի ժամանակակից հակաբեղմնավորիչների հասանելիությունը, մասնավորապես՝ գյուղական վայրերում, մնում է սահմանափակ հակաբեղմնավորիչների ձեռքբերման համար բյուջետային հատկացումների բացակայության պատճառով[34]։
- Վերարտադրողական առողջության բարելավման ռազմավարության շրջանակներում «Մայրության և մանկան պետական վկայականի ծրագրերը» շարունակվում են իրականացվել, որի շնորհիվ նախածննդյան և մանկաբարձական խնամքի հղիներին տրամադրվել է անվճար բուժօգնություն և հնարավոր է եղել ապահովել շուրջ 100%-ով, կանանց ներառումը նախածննդյան խնամքի և ստացիոնար բուժման մեջ, ծննդաբերություն՝ անկախ բնակության վայրից կամ սոցիալական կարգավիճակից և այլն։
- Հղիության արհեստական ընդհատումների կրճատման, վերարտադրողական առողջության բարելավում ապահովելու նպատակով հակաբեղմնավորման մեթոդների առկայության վերաբերյալ իրազեկման, մատչելիության ապահովման և անցանկալի հղիության դեպքերի կանխարգելման համար ծրագրեր իրականացվել են 2019–2023 թթ. Առողջապահության նախարարության և ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի միջև համագործակցությամբ։
- 2019–2023 թվականների ընթացքում վերարտադրողական տարիքի շուրջ 3500 կին և տղամարդ մասնակցել է համայնքային հանդիպումներին/դասընթացներին, և 2350 երիտասարդ կին և տղամարդ մասնակցել է վերարտադրողական առողջությանը նվիրված ինտերակտիվ թատերական ներկայացումների։

- Հղիության արհեստական ընդհատման անվտանգությունը բարձրացնելու նպատակով բարելավվել է դեղորայքային աբորտի հասանելիությունը Հայաստանի բոլոր ստացիոնար բժշկական կազմակերպություններում:
- ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով ապրող մարդկանց նկատմամբ խտրական վերաբերմունքի պատճառներից մեկը մարդկանց տեղեկացվածության անբավարար մակարդակն է, ՄԻԱՎ-ի փոխանցման ուղիների վերաբերյալ հասարակության մեջ դեռևս շրջանառվող թյուր պատկերացումները:
- Քաղցկեղի դեմ պայքարի շրջանակներում մեկնարկել է նոր՝ կրծքագեղձի քաղցկեղի սքրինինգային ծրագիրը, որի շրջանակներում 2021 թվականին հետազոտվել է 6961 կին:
- 2020 թվականից սկսած վերարտադրողական առողջության հետ կապված խնդիրների հայտնաբերման նպատակով 15 տարեկան 6317 աղջիկ (տվյալ տարիքային խմբի 40,3%) անցել են որովայնի օրգանների և վահանաձև գեղձի գերձայնային հետազոտություն:
- 2021 թվականի ընթացքում կատարվել է 33 շահառուի արհեստական սերմնավորում, գրանցվել է 17 հղիություն և մեկ ծննդաբերություն: Կատարվել է 393 շահառուի արհեստական բեղմնավորում, գրանցվել է 171 հղիություն, ծնվել է 74 երեխա:
- Մշակվել և Առողջապահության նախարարի 2021 թվականի հուլիսի 19-ի թիվ 2751-Լ հրամանով հաստատվել է «Հաշմանդամություն ունեցող անձանց բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման ուղեցույցը»[35], որն նպատակ ունի նպաստել նաև բժշկական օգնություն տրամադրողների վերաբերմունքի փոփոխությանը:
- Առողջապահական համակարգում դեռևս առկա է հաշմանդամություն ունեցող կանանց, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով ապրող կանանց և թմրանյութեր օգտագործող կանանց նկատմամբ խտրականություն և խարան, առողջապահական ծառայությունների սահմանափակ հասանելիություն: Հաշմանդամություն ունեցող կանայք շարունակում են բախվել համակարգային խոչընդոտների, ներառյալ՝ ֆիզիկական, առողջապահական ծառայություններից և համապատասխան տեղեկատվությունից և հաղորդակցությունից օգտվելու, ինչպես նաև սեռական և վերարտադրողական առողջության ծառայությունների նկատմամբ խտրական վերաբերմունքի[36]:
- Կանանց համար անբավարար են հոգեկան առողջության ծառայությունները[37]:
- Հղիներին, մայրերին մատուցվող առողջապահական և սոցիալական ծառայությունների, հղիության պլանավորման, ծննդաբերության, երեխայի խնամքի վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն ստանալու համար ԱՆ և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի համագործակցության շրջանակներում ստեղծվել է «Բարև բալիկ» ինտերնետային մատչելի հարթակը:
- Բուժաշխատողների շրջանում գենդերային զգայունության բարձրացման, կանանց, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող, սեռական և վերարտադրողական իրավունքների պաշտպանության վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելու, հղիության ընդհատման և, մասնավորապես, սեռով պայմանավորված հղիության ընդհատման կանխարգելման շուրջ վերապատրաստման ծրագրեր են

իրականացվել ԱԱԻ կողմից, որոնք կրեդիտավորվում են ԱՆ կողմից:

- ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի Հայաստանյան գրասենյակի աջակցությամբ Շիրակի, Լոռու և Տավուշի մարզերում բացվել և գործում են «Ընտանիքի անկյուն» ռեսուրսային կենտրոնները, որտեղ անցկացվում են դասընթացներ, հանդիպումներ, քննարկումներ և միջոցառումներ՝ ուղղված կանանց ու տղամարդկանց դերերի վերաբերյալ կարծրատիպերի փոփոխմանը, երեխայի խնամքի և ծնողավարության մեջ տղամարդկանց ներգրավվածության մեծացմանը, նախածննդյան և հետծննդյան խնամքում տղամարդկանց ներգրավածության մեծացման կարևորության վերաբերյալ բուժաշխատողների իրազեկվածության բարձրացմանը, «Հայրերի դպրոց» ծրագրի իրականացմանը:
- 2021 թվականին «Իրական աշխարհ, Իրական մարդիկ» սոցիալական հասարակական կազմակերպության կողմից «ՄԻԱՎ-ով ապրող անձանց խնամք և աջակցություն» ծրագրի շրջանակներում իրականացվել է ՄԻԱՎ-ով ապրող անձանց նկատմամբ առկա խտրական դրսևորումների ուսումնասիրություն[38]:
- ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ոլորտում բուժաշխատողների կարողությունների զարգացման, ՄԻԱՎ-ով ապրող կանանց նկատմամբ խարանի և խտրականության նվազման նպատակով ՀՀ ԱՆ ԱԱԻ իրականացրել է ՄԻԱՎ-ի թեմայով դասընթացներ, որոնք ընդգրկել են ՄԻԱՎ-ի նկատմամբ բնակչության խարանի և խտրականության դեմ պայքարի, գենդերային հավասարության հիմնահարցեր: Դասընթացներին մասնակցել են 401 բուժաշխատող, որի 68,27%-ը եղել են կանայք:
- Մարզերում և գյուղական համայնքներում, հատկապես որտեղ առկա է միգրացիայի բարձր մակարդակ, իրականացվել են միգրանտների և նրանց ընտանիքների անդամների, ներառյալ՝ կանանց խորհրդատվություն և թեստավորում, կազմակերպվել են գյուղական համայնքներում ՄԻԱՎ վարակ թեմայով կրթական սեմինարներ, մի շարք քաղաքներում կանայք ընդգրկվել են փոխօգնության խմբերի աշխատանքներում, կատարվել հանրային միջոցառումներ, որոնց ընթացքում ևս կանայք տեղեկատվություն են ստացել և թեստավորվել են:
- Գյուղական 50 համայնքում կատարվել են շուրջ 13675 կանանց ՄԻԱՎ-ի, հեպատիտ Ց-ի և Բ-ի, սիֆիլիսի թեստավորում:
- Առողջապահական կանխարգելիչ միջոցառումները հավասար հիմունքներով չեն տրամադրվում ազատությունից զրկված կանանց, ինչպես տրամադրվում են ազատության մեջ գտնվող նույն տարիքի կանանց:
- Քաղաքացիական կացության ակտերի գրանցման (ՔԿԱԳ) մարմիններում ամուսնության գրանցման նպատակով դիմում ներկայացրած անձանց շրջանում առկա է ցածր իրազեկվածություն առողջապահական ծառայությունների արտոնյալ հիմունքներով տրամադրման հնարավորությունների մասին, ինչպես նաև ընտանիքի պլանավորման ծառայությունների վերաբերյալ:
- Ստեղծվել է բուժաշխատողի մասնագիտական էթիկայի կանոնների խախտման դեպքերը քննող էթիկայի հանձնաժողով:
- Կրծքով կերակրող մայրերի համար աշխատանքի և ուսման վայրերում 2021 թվականից մեկնարկել է կերակրասենյակների ստեղծումը ՀՀ ԱՆ ենթակայության բժշկական կազմակերպություններում և ՊՈԱԿ-ներում՝

կրծքով կերակրման սենյակների բացմամբ:

140. **Նպատակներ՝**

- Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում սեռական և վերարտադրողական առողջության համապարփակ, որակյալ և խտրականությունից զերծ ծառայությունների հասանելիության բարձրացում բոլոր կանանց և տղամարդկանց համար:
- Նախածննդյան և հետծննդյան խնամքի գործընթացում տղամարդկանց ներգրավման հնարավորությունների մեծացում՝ նպաստելու ծնողների համար հավասար պայմանների և հնարավորությունների, մասնավորապես՝ «պատասխանատու հայրության» խթանմանը:
- Կանանց բոլոր խմբերի համար ապահովել հասանելիություն ժամանակակից հակաբեղմնավորիչներին և ընտանիքի պլանավորման ծառայություններին, ինչպես նաև հասանելիությունն ապահով աբորտներին:
- Առողջապահական հաստատություններում ներառական և գենդերազգայուն միջավայրի ապահովում՝ բոլոր կին և տղամարդ հիվանդների / այցելուների համար:
- Սեռական բռնության ենթարկված կանանց համար առողջապահական ծառայությունների մատչելի և զգայուն տրամադրման ապահովում:

141. **Ակնկալվող արդյունքներ՝**

- Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում ուսումնասիրվել են բոլոր կանանց համար, այդ թվում՝ մարգինալացված այլ խմբերին պատկանող կանանց, մասնավորապես՝ սոցիալապես անապահով, գյուղաբնակ, տեղահանված և փախստականների նման կարգավիճակում գտնվող, հաշմանդամություն ունեցող, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով ապրող, թմրադեղեր օգտագործող և դատապարտյալ կանանց համար, ինչպես նաև բոլոր տղամարդկանց համար առկա  համապարփակ և որակյալ, մատչելի և հասանելի ծառայությունների մատուցման վիճակը:
- Առկա է գենդերազգայուն, բարելավված և հասանելի առողջապահական համակարգ կանանց և տղամարդկանց համար, ապահովված են գենդեր-արձագանքող առողջապահական քաղաքականություններ, այդ թվում տղամարդկանց (հայրիկների) ընտանիքի պլանավորման գործընթացում, մասնավորապես՝ ծննդաբերության շրջանում պարտականությունների մշակում և իրազեկում, անհատական ծնարանների առկայություն, ուսումնասիրված են հետծննդյան դեպրեսիաների իրավիճակը Հայաստանում:
- Սքրինինգային հետազոտությունների հասնելիություն փակ հաստատություններում ապրող կանանց համար, դրանց համապարփակ իրականացում ազատությունից զրկված կանանց շրջանում:
- Քաղաքացիական կացության ակտերի գրանցման (ՔԿԱԳ)

մարմիններում ամուսնության գրանցման նպատակով դիմում ներկայացրած կանանց մինչամուսնական խորհրդատվության և հետազոտությունների իրականացման մասին իրազեկվածության բարձրացում:

- Քաղաքացիական կացության ակտերի գրանցման (ՔԿԱԳ) մարմիններում ամուսնության գրանցմանն հաջորդող օրենսդրությամբ սահմանված ժամանակահատվածում բժշկական օգնության և սպասարկման անվճար և արտոնյալ պայմաններով ստանալու հնարավորությունների մասին իրազեկում:
- Հղիության դեղորայքային եղանակով արհեստական ընդհատմանհասանելիություն ոչ ստացիոնար առողջապահական հիմնարկներում (առողջության  առաջնային պահպանման օղակ):
- Բուժաշխատողների համար կանանց և աղջիկների սեռական և վերարտադրողական առողջության և իրավունքների վերաբերյալ պարբերական և պարտադիր վերապատրաստումերի իրականացում՝ հատուկ ուշադրություն դարձնելով խոցելի խմբերի կանանց առանձնահատկություններին ու կարիքներին:
- Հաշմանդամություն ունեցող կանանց առողջապահական ծառայություններից օգտվելու բազմակի խոչընդոտների վերհանում և նվազում, ինչպիսիք են ֆիզիկական խոչընդոտները, մատչելի տեղեկատվության և հաղորդակցման մեթոդների բացակայությունը կամ բժշկական սարքավորումների և ուսուցման բացակայությունը, բուժաշխատողների մասնագիտական թերի պատրաստվածությունը, հաշմանդամության սոցիալական մոդելի և հաշմանդամության տեսակի առանձնահատկություններին համապատասխան՝ կանանց հետ շփվելու գենդերազգայուն մեթոդներին չտիրապետումը:
- Սեռական և վերարտադրողական առողջության խնդիրների վերաբերյալ բժշկական խորհրդատվություն և ծառայությունների ստացումը մեկուսի և գաղտնի պայմաններում:
- Կախված հաշմանդամության տեսակից (տեսողության, լսողության, հենաշարժողական խնդիրներ, հոգեկան առողջության խնդիրներ), բժշկական օգնություն և ծառայություններ մատուցելիս կազմակերպություններն իրականացնում են անհատական միջոցառումներ՝ ըստ կարիքների՝ ներգրավելով հարազատներին, խնամակալներին, ուղեկցող անձանց կամ այլ օգնող մասնագետների:
- Պետության կողմից հակաբեղմնավորիչների գնումների համար առանձին միջոցների հատկացում, սոցիալապես անապահով և մարգինալացված խմբերին պատկանող կանանց, գյուղաբնակ կանանց, տեղահանված կանանց և փախստականների նման կարգավիճակում գտնվող կանանց, հաշմանդամություն ունեցող կանանց, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով ապրող կանանց համար ընտանիքի պլանավորման ծառայությունները հասանելի դարձնելու համար:
- Բուժաշխատողի մասնագիտական էթիկայի կանոնների խախտման դեպքերը քննող էթիկայի հանձնաժողովի գենդերազգայունության բարձրացում:
- Սեռական բռնության ենթարկված կանանց համար առողջապահական ծառայությունների մատչելիություն, ներառյալ սեռավարակների և անցանկալի հղիությունների կանխարգելում և զոհակենտրոն խորհրդատվության տրամադրում:
- Սեռական բռնության ենթարկված անձանց բուժօգնություն

տրամադրողների կողմից ոչ միայն բուժօգնության մատուցում, այլև դեպքերին արագ արձագանքման, գրանցման, վաղ հայտնաբերման և կանխարգելման ընթացակարգերի շուրջ կարողությունների զարգացում:

142. **Հիմնական ցուցանիշների օրինակներ,**
    - Առողջապահական համակարգում համապատասխան վերապատրաստված անձնակազմի թիվ:
    - Առողջապահական համակարգում համապատասխան վերապատրաստված անձնակազմի մասնաբաժին:
    - Առողջապահական համակարգում վերապատրաստումների թիվ:
    - Հանրային իրազեկումների թիվ
    - Իրականացված հետազոտությունների թիվ

143. **Գերակայություն** Գենդերային բռնության և խտրականության հաղթահարում, կանանց և աղջիկների նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելում, հաղթահարում և բռնության ենթարկված կանանց և աղջիկների պաշտպանություն և աջակցություն

144. Ղեկավարվելով «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով՝ Ռազմավարության մեջ ընտանեկան բռնության, կանանց նկատմամբ բռնության և գենդերային բռնության հարցերը դիտարկվում են որպես գերակա ուղղություն՝ ներկայացված առկա իրավիճակի նկարագրությամբ, նպատակների և ակնկալվող արդյունքների ցանկով, ինչպես նաև միջոցառումների ցանկով:
145. Սույն գերակայությունը մշակելիս հաշվի են առնվել ընտանիքում բռնության դեմ պայքարի բնագավառում առկա խնդիրները, միջազգային կառույցների, իրավապահ մարմինների, Աջակցության կենտրոնների և քաղաքացիական հասարակության դիտարկումները և առաջարկությունները, Հայաստանում Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդումները, տվյալ ոլորտում միջազգային առաջադեմ փորձը, առաջնային և երկրորդային տվյալների հավաքագրման և վերլուծության արդյունքները այլ շահագրգիռ կողմերի ներկայացուցիչներից ստացված՝ ոլորտի խնդիրների և դրանց լուծումների վերաբերյալ առաջարկությունները, ինչպես նաև օրենսդրական և գործնական հարթություններում առկա խնդիրների մասին այլ վերաբերելի զեկույցներ, ուսումնասիրություններ և այլ նյութեր[39]:
146. Սույն գերակայության բոլոր ջանքերն ուղղված են ավելի ապահով և անվտանգ միջավայր և հասարակություն ստեղծելուն՝ բոլոր կանանց և աղջիկների համար, ինչպես նաև կանխելուն ցանկացած տեսակի բռնություն և աջակցելուն որևէ տեսակի բռնության ենթարկված անձանց, մասնավորապես՝ կանանց և աղջիկներին, ինչպես նաև պտղի

սեռով պայմանավորված խտրական ընտրության հաղթահարմանը։

147. Գերակայության մեջ ներկայացրած նպատակները և գործողությունները միտված են հասցեագրելու խնդրո առարկա բնագավառի օրենսդրական բացերը և գործնական հիմնահարցերը և առաջարկելու թիրախավորված լուծումներ խնդիրների համար։

148. **Իրավիճակի նկարագիր և գնահատում.**

Ընտանեկան բռնությանն առնչվող մարտահիրավերները և խնդիրները նախկինում հասցեագրվել են տարբեր ոլորտային ռազմավարական փաստաթղթերում, ներառյալ՝ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագրում, ՀՀ գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարության մեջ։

149. Սույն գերակայության մեջ ներկայացված խնդիրներն ու վերջինիս ուղղված գործողությունները միտված են աջակցել ոլորտում առկա/ գործող կառուցակարգերն ու թիրախային բարելավել իրավիճակը՝ համալիր և հասցեագրված, զոհակենտրոն մոտեցում որդեգրելով և ցուցաբերելով։

150. Վերջին տարիներին ոլորտում գրանցվել են որոշակի ձեռքբերումներ։ Օրինակ, վերջին 5 տարվա ընթացքում ՀՀ ՆԳՆ ոստիկանությունում ծառայող /աշխատող/ կանանց թվաքանակի և տոկոսային հարաբերակցության վերաբերյալ տեղեկատվությունը։Կարևորելով Ոստիկանությունում գենդերային հավասարության ապահովման հարցը, ՀՀ վարչապետի կողմից խնդիր է դրվել Պարեկային ծառայությունում կին ծառայողների թվաքանակը մինչև 2026 թվականը հասցնել 30%-ի՝ անցկացնելով կին ծառայողների թիրախային ընդունելություն: Կին ծառայողների թեկնածուների հնարավորինս լայն շրջանակ ապահովելու համատեքստում մեկնարկել է «Եղի՛ր ուժ մեր երկրի համար» խորագրով իրազեկման արշավ, որին միացել և Պարեկային ծառայության շարքերը համալրելու կոչով դիմել են բազմաթիվ հայտնի և հաջողակ կանայք, այդ թվում՝ Մարդու իրավունքների պաշտպանը, ԱԺ պատգամավորներ, միջազգային կազմակերպություններում բարձր պաշտոն զբաղեցնող գործընկերներ:

151. Որպես առաջընթաց հիշատակման են արժանի «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքի և դրա կիրարկմանն ուղղված շուրջ մեկ տասնյակ ենթաօրենսդրական ակտերի ընդունումը, «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին»ԵԽ-ի կոնվենցիայի ստորագրումը, որի վավերացումը կենսական կարևորություն ունի խնդրո առարկա ոլորտում համալիր և թիրախային կառուցակարգերի զարգացման և կիրարկման համար, իրազեկության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացումը, մի շարք հետազոտությունները և

հանրային քննարկումները:

152. Քրեական դատավարության մեջ և առկա է առաջընթաց. ընտանեկան բռնության բոլոր դեպքերն այլևս քննվում են հանրային կարգով:

153. Այնուամենայնիվ, դեռևս առկա են օրենսդրական բացեր և գործնական հիմնահարցեր, որոնց նկատմամբ համակարգային մոտեցումն անհրաժեշտ է ընտանիքում բռնության դեմ պայքարի վերաբերյալ ներպետական օրենսդրությունը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու և օրենսդրության արդյունավետ կենսագործումն ապահովելու նպատակով:

154. Ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցության կառուցակարգերի հիմքը դրվել է օրենքով: Այնուամենայնիվ, օրենքի պահանջների լիարժեք կատարման և բռնության ենթարկված անձանց համակողմանի աջակցության և լիարժեք ծառայության ապահովման համար պետությունը պետք է ներդնի լրացուցիչ ջանքեր: Մասնավորապես, այս բնագավառում հիմնական խնդիրներն են հասանելի, մատչելի աջակցության կենտրոնների և ապաստարանների քանակը, միասնական թեժ գծի բացակայությունը, ապաստարաններում տեղավորված երեխաների համար կրթության ապահովումը և այլն: Հարկավոր է անդրադառնալ ապաստարանների հարցին, որը պետք է կանոնակարգվի, որպեսզի որակյալ ծառայություն մատուցվի, օրինակ՝ հարկավոր է, որպեսզի ծառայություն մատուցող կազմակերպությունները պետական հավաստագիր ստանան և հաշվետու դառնան մատուցած ծառայաությունների համար: Մարզերում ապաստարանների բացակայությունը շարունակում է մնալ օրակարգային խնդիրներ:

155. 2022 թվականի ընթացքում ՀՀ քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) վարույթում քննվել է ընտանեկան բռնության վերաբերյալ 960 քրեական վարույթ: 960  քրեական վարույթից 122-ն ավարտվել է մեղադրական եզրակացությամբ  և 126 անձի  վերաբերյալ ուղարկվել է դատարան, 301 քրեական վարույթ կարճվել է, որից 150-ը՝ ռեաբիլիտացնող, իսկ 151-ը՝ ոչ ռեաբիլիտացնող հիմքով, 8 քրեական  վարույթ կասեցվել է՝ ՀՀ նախկին քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի հիմքերով: 16 քրեական վարույթ ուղարկվել է ըստ ենթակայության, 130-ը՝ միացվել է, 383 քրեական վարույթ փոխանցվել է 2023թ. հունվար ամիս:

156. Դատարան ուղարկված վարույթներից 9-ը եղել է սպանության, 1-ը՝ առողջությանը ծանր վնաս պատճառելու, 3-ը՝ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու, 1-ը՝ մարդուն առևանգելու, 1-ը՝ սեքսուալ բնույթի գործողությունների, 2-ը՝ 16 տարին չլրացած անձի նկատմամբ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելու, 5-ը՝ առողջությանը թեթև վնաս պատճառելու, 25-ը՝ ֆիզիկական ներգործության, 3-ը՝ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելու, 1-ը՝ ծնողի կամ այլ մերձավոր ազգականի և երեխայի միջև տեսակցության իրականացմանը խոչընդոտելը, 3-ը՝ ալիմենտ (ապրուստավճար) վճարելուց խուսափելու, 68-ը՝ այլ հանցագործությունների դեպքերի առթիվ:

157. Դատարան ուղարկված վարույթներով 125 մեղադրյալներից 108-ը հանդիսացել են ամուսիններ, 4-ը՝ տատ կամ պապ, 5-ը՝ քույր կամ եղբայր, 8-ը՝  զավակ կամ թոռ:

158. 125 անձի նկատմամբ ոչ ռեաբիլիտացիոն հիմքերով քրեական

հետապնդում չի իրականացվել կամ դադարեցվել է քրեական հետապնդումը:

159. ՀՀ քննչական կոմիտեում իգական սեռի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թիվը տարեցտարի աճել է: Այսպես, 2021 թվականինկանանց տոկոսը համակարգում կազմել է 14% (93 հոգի), 2022 թվականին՝9% (118 հոգի),
իսկ 2023 թվականին՝ 16.7% (130 հոգի):
160. 2023թ. 1-ին կիսամյակի ընթացքում ՀՀ քննչական կոմիտեի վարույթում քննվել է ընտանեկան բռնության վերաբերյալ 1051 քրեական վարույթ: 1051 քրեական վարույթից 140-ն ավարտվել է մեղադրական եզրակացությամբ և 144 անձի վերաբերյալ ուղարկվել է դատարան, 2-ն ավարտվել են եզրափակիչ ակտով և ուղարկվել դատարան, 222 քրեական վարույթ կարճվել է, որից 172-ը՝ ռեաբիլիտացնող, իսկ 50-ը՝ ոչ ռեաբիլիտացնող հիմքով, 83-ով ավարտվել են վարութային և ապացուցողական գործողությունները, 7 քրեական վարույթ ուղարկվել է ըստ ենթակայության, 76-ը՝ միացվել է, 521 քրեական վարույթ փոխանցվել է 2023թ. 2-րդ կիսամյակ:
161. Դատարան ուղարկված /առանց կրկնակիի/ 139 վարույթներից 2-ը քննվել են սպանության, 3-ը՝ սպանության փորձի, 3-ը՝ առողջությանը ծանր վնաս պատճառելու, 2-ը՝ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու, 1-ը՝ ազատությունից ապօրինի զրկելու, 2-ը՝ սեքսուալ բնույթի գործողությունների, 11-ը՝ առողջությանը թեթև վնաս պատճառելու, 115-ը՝ այլ հանցագործությունների դեպքերի առթիվ:
162. Դատարան ուղարկված վարույթներով 144 մեղադրյալից 110-ը հանդիսացել են կին/ամուսին, 20-ը՝ ծնող/տատ ու պապ, 5-ը՝ քույր/եղբայր, 9-ը՝ զավակ/թոռ:
163. Դատարան ուղարկված վարույթներով 152 տուժողից 14-ը եղել են մինչև 12, 4-ը՝ 12-14, 4-ը՝ 14-18, 130-ը՝ 18-ից բարձր տարեկան:
164. Կարճված վարույթներից 2-ը քննվել են սպանության, 6-ը՝ առողջությանը թեթև վնաս պատճառելու, 1-ը՝ ծնողի կամ այլ մերձավոր ազգականի և երեխայի միջև տեսակցության իրականացումը խոչընդոտելու, 3-ը՝ ալիմենտ (ապրուստավճար) վճարելուց խուսափելու, իսկ 207-ը՝ այլ հանցագործությունների դեպքերի առթիվ:
165. Կարճված վարույթներով 59 անձի նկատմամբ ոչ ռեաբիլիտացիոն հիմքերով քրեական հետապնդում չի իրականացվել կամ դադարեցվել է քրեական հետապնդումը: 59 անձից 52-ը հանդիսացել են կին/ամուսին, 4-ը՝ ծնող/տատ ու պապ, 1-ը՝ քույր/եղբայր, 2-ը՝ զավակ/թոռ:
166. Կարճված վարույթներով 221 տուժողից 4-ը եղել են մինչև 12, 6-ը՝ 12-14, 6-ը՝ 14-18, 205-ը՝ 18-ից բարձր տարեկան:

167. Հարկ է ընդգծել նաև այն, որ ՀՀ քննչական կոմիտեի նախագահի հրամանով 2023 թվականի ուսումնական 2-րդ կիսամյակից իրականացվում է «Դասը վարում է քննիչը» ծրագիրը, որի շրջանակներում քննիչները հանրակրթական դպրոցներում իրականացնում են դասավանդում, այդ թվում՝ ընտանեկան բռնությանը վերաբերող հարցերով:

168. Հայաստանի Հանրապետության Ոստիկանության Ինֆորմացիոն կենտրոնում գրանցված ընտանիքում բռնության դեպքերի վերաբերյալ 2020-2021 թվականների վիճակագրությունը, ինչպես նաև ընտանեկան բռնությունների վերաբերյալ քննված քրեական գործերով վերջին տարիների վիճակագրական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, յուրաքանչյուր տարի միջինում քննվել է 500 և ավելի գործ: Այսպես, օրինակ, ըստ 2020 թվականի տվյալների, քննվել է 540 ընտանիքում բռնության դեպք, որից 514-ը` ֆիզիկական, 26-ը` հոգեբանական բռնության դեպքեր են: 150-ով հարուցվել են քրեական գործեր, որից 39-ն ուղարկվել է դատարան, 111-ը` կարճվել:

169. Նշված դեպքերի մեծամասնությունն ուղղված է ամուսնու կողմից կնոջ նկատմամբ (540-ից 366-ը), կնոջ կողմից ամուսնու նկատմամբ արձանագրվել է 22 դեպք, ծնողի կողմից զավակի նկատմամբ` 43, զավակի կողմից ծնողի նկատմամբ` 57, ընտանիքի այլ անդամների կողմից` 48 դեպք:

170. 2023 թվականի ընթացքում, ի համեմատ 2022 թվականի, ՀՀ ոստիկանության կողմից գրանցած ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ աճ է նկատվել, մասնավորապես` 152 դեպքով` օպերատիվ ամփոփագիր (2022 թվականին` 1186, 2023 թվականին` 1338), անհետաձգելի միջամտության որոշման (2022 թվականին` 466, 2023 թվականին` 610, ընդհանուր աճ` 144-ով), հաշվառման վերցնելու (2022 թվականին` 902, 2023 թվականին` 964, ընդհանուր աճ` 62-ով) և հաշվառման մեջ գտնվելու (2022 թվականին` 1194, 2023 թվականին` 1266, ընդհանուր աճ` 72-ով): Նվազում գրանցվել է միայն նախազգուշացման որոշումների դեպքում, 2022 թվականին` 436, 2023 թվականին` 424, նվազում` 12-ով համապատասխանաբար:

171. Վերջին 25 տարիների ընթացքում, քննարկվող խնդրի վերաբերյալ ՄԱԿ-ի, Եվրոպայի խորհրդի, Եվրոպական Միության, Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության և մի շարք միջպետական կազմակերպությունների մակարդակով հաստատվել են բազմաթիվ հռչակագրեր և հանձնարարականներ[40] և երեք տարածաշրջանային, իրավական տեսանկյունից պարտադիր մեխանիզմներ (կոնվենցիաներ[41]): Հետևաբար, ընտանիքում բռնության և կանանց նկատմամբ գենդերային բռնության արգելքը վերածվել է միջազգային սովորութային իրավունքի սկզբունքի[42]:

172. Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է տվյալ բնագավառում մարդու իրավունքների գրեթե բոլոր միջազգային կոնվենցիաները և պարտավորություններ ստանձնել դրանց պահանջներին ազգային օրենսդրության ու քաղաքականությունների համապատեսխանեցման ուղղությամբ: Հայաստանի կողմից վավերացված (ՄԱԿ-ի և ԵԽ-ի) կոնվենցիաների շարքում են` Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան (CEDAW կոնվենցիա), Կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերի վերացման կոնվենցիայի կամընտիր արձանագրություն (OP-CEDAW), Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա (CRC), Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի կամընտիր արձանագրություն մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգաֆիայի մասին (CRC-OP-SC), Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի մասին կոնվենցիա (CAT), Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու

պատժի մասին կոնվենցիայի կամընտիր արձանագրություն (CAT-OP), Քաղաքական ու քաղաքացիական իրավունքների միջազգային դաշնագիր (CCPR), Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիր (CESCR), Հաշմանդամություն ունեցող անձանց մասին կոնվենցիա (CRPD), Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների կոնվենցիա (ECHR) և դրան կից արձանագրություններ 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 11, 12, 14 և 16, Սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաներին պաշտպանության մասին ԵԽ կոնվենցիա (Լանզարոտեի կոնվենցիա)։

173. Հայաստանը ստորագրել է, սակայն դեռ չի վավերացրել Կանանց դեմ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրանց դեմ պայքարի ԵԽ կոնվենցիան։

174. ՀՀ-ն ստորագրել է նաև Գործողությունների Պեկինի ծրագիրը և միացել ՄԱԿ-ի Հազարամյակների հռչակագրին։ Թվարկված միջազգային իրավական գործիքներին միանալն արտահայտում է կառավարության կամքը՝ հետևողական և արդյունավետ պայքար մղելու ընտանիքում բռնության և կանանց նկատմամբ բռնության դեմ։

175. Ի լրումն, Հայաստանը պարտավոր է իրականացնել ՄԱԿ-ի կայուն զարգացման 2030 օրակարգը, որ հաստատվել է ՄԱԿ-ի բոլոր անդամ երկրների կողմից, 2015թ-ին (ԿԶՆ 5-ը վերաբերում է գենդերային հավասարության ապահովմանն ու կանանց հզորացմանը, թիրախ2՝ պետական և մասնավոր ոլորտներում կանանց և աղջիկների նկատմամբ բռնության բոլոր ձևերի վերացում) և նախաձեռնել է ԿԶՆ-ների իրականացման կամավոր ազգային դիտարկում։[43]

176. ՄԱԿ-ի պաշտոնական կայքէջում հրապարակված զեկույցը ներկայացնում է Կայուն զարգացման նպատակների իրականացման ուղղությամբ Հայաստանի նախաձեռնած քայլերը 2018-2020 թվականների ժամանակահատվածում։ Այն բաղկացած է խմբավորված հետևյալ հինգ բաժիններից՝ մարդկային կապիտալի զարգացում, ենթակառուցվածքների մատչելիության և տնտեսական զարգացման ապահովում, կոռուպցիայի դեմ պայքար, մարդու իրավունքների պաշտպանություն և արդարություն, շրջակա միջավայրի պաշտպանություն և կլիմայի փոփոխության դեմ պայքար, համագործակցություն հանուն կայուն զարգացման նպատակների կենսագործման։

177. Վերը շարադրված միջազգային փաստաթղթերի շրջանակներում մշտադիտարկում իրականացնող մարմինները Հայաստանի Հանրապետությունում ընտանիքում բռնության դեմ տարվող պայքարի առնչությամբ ներկայացրել են մի շարք դիտողություններ և առաջարկություններ։ Մասնավորապես, Մարդու իրավունքների խորհրդի կողմից իրականացված համընդհանուր պարբերական դիտարկման 2-րդ շրջափուլում Հայաստանը համաձայնել է իրականացնել գենդերային բռնությանը և ընտանիքում բռնությանը վերաբերող մի շարք հանձնարարականներ, ներառյալ Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրանց դեմ պայքարի ԵԽ կոնվենցիայի վավերացման հանձնարարականը[44], ընտանիքում բռնությունը քրեականացնող և տուժած անձանց պաշտպանությունը ապահովող համակողմանի առանձին օրենքի ընդունման հանձնարարականը[45] և ընտանիքում բռնության և գենդերային բռնության դեմ պայքարի ընդլայնման և

ընտանիքում բռնությունից տուժած անձանց պաշտպանությունն ամրապնդելու հանձնարարականները[46]:

178. «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքի 12-րդ հոդվածը սահմանում է, որ անչափահաս կամ անգործունակ անձի նկատմամբ պաշտպանության միջոցներ չեն կիրառվում: Պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ այս կարգավորումը էականորեն սահմանափակում է բռնության ենթարկվող անձին պաշտպանելու օրինական հնարավորությունները: Բացի այդ, կարևոր է ընդգծել, որ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 12-րդ հոդվածի համաձայն` հաշմանդամություն ունեցող անձինք մյուսների հետ հավասար հիմունքներով ունեն իրավունակություն կյանքի բոլոր ոլորտներում: ՄԱԿ-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի թիվ 1 (2014) ընդհանուր մեկնաբանության համաձայն` իրավական գործունակության մերժումը չպետք է հիմնված լինի այնպիսի անձնական հատկությունների վրա, ինչպիսիք են` սեռը, ռասան կամ հաշմանդամություն ունենալը, և դա չպետք է ունենա մարդուն այլ կերպ վերաբերվելու նպատակ կամ ազդեցություն: ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատարը հաշմանդամության հիմքով անձանց քրեական պատասխանատվությունից ինքնաբերաբար ազատելը համարել է խտրական և անօրինական:[47]

179. Վերանայման անհրաժեշտություն ունեն նաև Օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերը: Հիշատակման է արժանի հատկապես ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի «Ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառման կարգը սահմանելու մասին» N 1381 – Ն որոշումը: Գործող կարգը չափազանց խրթին է և չի ապահովում բոլոր պատկան մարմինների կողմից տվյալների ստանդարտացված հավաքագրում: Բացի այդ`  գործող որոշումը չի արտացոլում անձնական տվյալների պաշտպանության առաջնահերթությունը: Ուստի, կարևոր է ներդնել միասնական էլեկտրոնային հարթակ կամ տեղեկատվական շտեմարան` տվյալների հավաքագրումը առավել պարզ, արդյունավետ դարձնելու նպատակով: Տվյալների հավաքագրումը պետք է իրականացվի ԿՆԽՎ Կոմիտեի 35-րդ ընդհանուր հանձնարարականին համահունչ[48]: Ընտանիքում բռնության վերաբերյալ հաղորդում ներկայացված դեպքերի մասին տվյալները պետք է բացվեն ըստ բռնություն գործադրած և բռնության ենթարկված անձանց սեռի և տարիքի, նրանց միջև կապի բնույթի, բռնության տեսակի և բնակության  վայրի և  կարևոր այլ գործոնների (օրինակ` հաշմանդամություն ունեցող անձի կարգավիճակը, հոգեկան առողջություն ունեցող անձի կարգավիճակը, աշխատանք ունենալու հանգամանքը): Հարկ է նաև երաշխավորել, որ տվյալների դասակարգերը ներդաշնակեցված լինեն դատաիրավական ամբողջ համակարգում (ոստիկանություն, քննչական կոմիտե, դատախազություն, դատարաններ):

180. Ավելին, պետք է հատուկ ուշադրություն դարձվի անձնական տվյալների պաշտպանությանը, որը պետք է համահունչ լինի Հայաստանի կողմից վավերացված Անձնական տվյալների ավտոմատացված մշակման

դեպքում անհատների պաշտպանության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիային, ԿՆԽՎ Կոմիտեի 35-րդ ընդհանուր հանձնարարականին[49], ԳՐԵՎԻՈ-ի զեկույցներում պարզաբանված պահանջներին[50] և «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքին։

181. Կարևոր խնդիր է բժշկական հաստատություններ դիմած և ընտանիքում բռնության ենթարկված անձանց վերաբերյալ այդ հաստատությունների կողմից այլ մարմիններին, հատկապես իրավապահ մարմիններին, տեղեկություններ փոխանցելու իրավաչափության պայմանների կանոնակարգումը։ Այս ոլորտը հատկապես զգայուն է և հավասարակշռված կարգավորման կարիք ունի, քանի որ խոսքը վերաբերում է բժշկական գաղտնիքի հրապարակմանը։
182. Ընտանիքում բռնության դեմ պայքարի գործում անկյունաքարային նշանակություն ունեն Ոստիկանության գործառույթները, որոնց պատշաճ իրավական կարգավորումը այս ռազմավարության առաջնահերթություններից է։
183. Չնայած Օրենքի ընդունումից հետո արձանագրված կարևոր առաջընթացին՝ ընտանիքում բռնության դեմ պայքարի բնագավառում միջգերատեսչական արդյունավետ համագործակցությունը պահանջում է լրացուցիչ ջանքեր։[51]
184. Աշխարհաքաղաքական բարդ և ծանր զարգացումների արդյունքում, կարևոր է դառնում բարձրացնել տեղահանված և սահմանամերձ բնակավայրերում ապրող կանանց իրավագիտակցությունը և բռնությունը ճանաչելու և համապատասխան ինստիտուտներին դիմելու նրանց կարողությունները։ Կարևոր է նաև հոգեբանական աջակցության տրամադրումը, որը հնարավորություն կտա հաղթահարել պատերազմական տրավմաները և ինտեգրվել նոր միջավայր։
185. Հայաստանում նորածինների սեռերի անհամաչափ հարաբերակցությունը ոչ միայն որպես մարդու իրավունքների, այլ նաև ազգային անվտանգության խնդիր է։ Խնդրի բացահայտումից հետո այն ներառվել է նաև մոր և մանկան առողջության պահպանման պետական քաղաքականությունում և գենդերային բռնության դեմ պայքարի ծրագրում։
186. Հայաստանում սեռով պայմանավորված խտրական ընտրության կանխարգելման քաղաքականություններն իրենց մեջ ներառում են օրենսդրական արգելքներ՝ սահմանափակելով սեռի որոշումը և դրանով պայմանավորված, ոչ բժշկական պատճառներ ունեցող ընտրությունը, ինչպես նաև իրազեկվածության բարձրացումը, ֆինանսական օժանդակություններ և այլ իրավական բարեփոխումներ՝ ուղղված կանանց իրավունքների ամրապնդմանը և երեխայի սեռի նախապատվության նվազեցմանը։
187. Հարկավոր է նշել, որ «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ հղիության արհեստական ընդհատումը թույլատրվում է 12-ից 22-րդ շաբաթականում միայն բժշկական պատճառներից կամ սոցիալական ցուցումներից ելնելով՝ կնոջ գրավոր համաձայնությամբ։ Եթե չկան հիմնավորված պատճառներ, ապա չնախատեսված որևէ այլ դեպքում՝ ներառյալ սեռով պայմանավորված, 12-ից մինչև 22 շաբաթական

հղիության արհեստական ընդհատումն արգելվում է:

188. Օրենքը նաև սահմանում է, որ հղիության արհեստական ընդհատումը կարող է իրականացվել միայն այն հաստատություններում, որոնք ունեն բժշկական գործունեության լիցենզիա:
189. Երեխայի սեռի խտրական ընտրության առաջին նախապայմանը տղա երեխաներին տրվող նախապատվությունն է: Այս առումով կարևոր է դառնում հանրային իրազեկվածության բարձրացումը և դրան միտված աշխատանքների ապահովումը:
190. Հանրային իրազեկումը պետք է միտված լինի ընտանիքում և հասարակությունում կնոջ դերի արժևորմանը, ինչպես նաև սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների ռիսկերի և բացասական հետևանքների մասին տեղեկատվության տարածմանը հանրային արշավների միջոցով՝ ստեղծելով համապատասխան բովանդակություն և ներդնելով հասցեական մոտեցումներ՝ ըստ մարզերի և սոցիալական տարբեր խմբերի: Այս միջոցառումները պետք է հասանելի լինեն ՀՀ ողջ տարածքում:
191. Ընտանեկան բռնության, կանանց և աղջիկների նկատմամբ բռնության, գենդերային բռնության, խտրականության և անհավասարության հաղթահարման հարցում մեծ է մեդիայի դերը: Այս առումով կարևոր է դառնում զարգացնել նաև մեդիա ներկայացուցիչների կարողություններն ու հմտությունները:

192. **Նպատակներ՝**

- Ընտանեկան բռնության դեմ պայքարի օրենսդրության կատարելագործում և ինստիտուցիոնալ կառուցակարգերի հզորացում:
- Ընտանիքում բռնության կանխարգելում և բազմամասնագիտական արձագանքման և համագործակցության ամրապնդում և արդյունավետության բարձրացում
- Ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և աջակցության միջոցների խթանում և կատարելագործում:
- Գենդերային բռնության և բոլոր կանանց և աղջիկների նկատմամբ բռնության դեմ պայքար և նրանց իրավագիտակցության և կարողությունների զարգացում:
- Պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների կանխարգելման ծրագրերի բարելավում և խտրական նախապատվության հաղթահարում:

193. **Ակնկալվող արդյունքներ՝**

- Ընտանեկան բռնության դեմ պայքարի արդյունավետ և արձագանքող օրենսդրությունը հաստատված է, ինստիտուցիոնալ կառուցակարգերը՝ բարելավված:
- Ընտանիքում բռնության կանխարգելման պետական և տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, բնակչության հետ անմիջական կապի մեջ գտնվող կառուցների, կազմակերպությունների միջև համագործակցային հարաբերություններն ամրապնդված են, նրանց կարողությունները՝ հզորացած, ընտանիքում բռնության վերաբերյալ իրազեկվածությունը՝ բարձրացած:

- Ընտանիքում բռնության ենթարկված անձանց լիարժեք պաշտպանության միջոցները հաստատված են, աջակցության միջոցները՝ բարելավված։
- Գենդերային բռնության և բոլոր կանանց և աղջիկների, այդ թվում՝ տարբեր խոցելի և մարգինալացված խմբերի, նկատմամբ բռնությունը՝ հաղթահարված է և կանխարգելված։
- Պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների կանխարգելման ծրագրերը բարելավված են, իսկ խտրական նախապատվությունը՝ հաղթահարված։

194. **Հիմնական ցուցանիշներ՝**

- Ոլորտային ծառայողների գենդերազգայունության աստիճան։
- Բարելավված օրենսդրական դաշտի առկայություն։
- Բռնության ենթարկված անձանց պաշտպանության կառուցակարգերի առկայություն և այդ կառուցակարգերի արդյունավետության ցուցանիշ։
- Ոլորտային ծառայողների և աշխատակազմի վերապատրաստման ծրագրերում գենդերային խնդիրների և գենդերազգայունություն ապահովող թեմաների և ուսումնական նյութերի թիվ։
- Իրականացված վերապատրաստումների թիվ՝ գենդերային գիտելիքի և կարողությունների վերաբերյալ։
- Գենդերային խնդիրների, մասնավորապես՝ ընտանեկան բռնության վերաբերյալ և աջակցող մարմիններին դիմելու մասին հանրային իրազեկման մակարդակ։
- Բռնության ենթարկված անձանց տոկոս, որոնք օգտվել են աջակցության ծառայություններից։
- Պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների մասնաբաժին։

195. **Գերակայություն** Կլիմայի փոփոխության նկատմամբ գենդերազգայուն և գենդերաարձագանքող մոտեցումների ձևավորում, ներառական սկզբունքների  ապահովում և իրազեկվածության բարձրացում

196. Կլիմայի փոփոխության հետ կապված հիմնախնդիրները, ինչպես նաև պետության կողմից դրանց արձագանքելու ռազմավարական մոտեցումներն առաջին անգամ են արտացոլվում գենդերային ռազմավարության շրջանակում՝ որպես գերակա ուղղություն։

197. Քանի որ նախկին ռազմավարությունում արտացոլված չեն եղել ռազմավարական նպատակներ, ելակետային տվյալները վերցվել են փոխկապված ոլորտներում ռազմավարական փաստաթղթերի, ինչպես նաև ոլորտում իրականացված հետազոտությունների և ուսումնասիրությունների տվյալներից։ Հաշվի են առնվել նաև միջազգային փորձը և արդյունավետ միջամտության ծրագրերը, որոնք իրականացվել են Հայաստանի Հանրապետությունում։

198. **Իրավիճակի նկարագիր և գնահատում.**

Հայաստանի Հանրապետությունը 2017 թվականին վավերացրել է Փարիզյան համաձայնագիրը, որը կլիմայի փոփոխության վերաբերյալ առաջին համընդհանուր, իրավաբանորեն պարտադիր գլոբալ համաձայնագիրն է: Որպես համաձայնագրի կողմ-երկիր, Հայաստանի Հանրապետությունը պարտավորվել է կլիմայի փոփոխության դեմ պայքարում գործողություններ ձեռնարկելիս խթանել և հաշվի առնել գենդերային հավասարության, կանանց հնարավորությունների ընդլայնման և միջսերնդային արդարության սկզբունքները:[52]

199. Կլիմայի փոփոխության այս հիմնադիր փաստաթղթում, ինչպես նաև միջազգային այլ ոլորտային փաստաթղթերում գենդեր-արձագանքող, մասնակցային՝ հաշվի առնելով բնակչության խոցելի խմբերը, կլիմայի ազդեցության տեսակետից խոցելի համայնքներն ու էկոհամակարգերը, ինչպես նաև գենդերակենտրոն կարողությունների ձևավորումը՝ կլիմայի փոփոխության մեղման և հարմարվողականության քաղաքականությունների մշակման կարևոր պահանջներն են:[53]
200. Կլիմայի փոփոխության գենդերային և սոցիալական ազդեցության հիմնախնդիրներն ու գենդեր-արձագանքող մոտեցումները ներառված են վերջին տարիներին կառավարության կողմից ընդունված մի շարք ոլորտային ռազմավարական ծրագրերում: Այսպես, գյուղատնտեսության, էներգետիկայի, առողջապահության, ջրային ռեսուրսների բնագավառների զարգացման ռազմավարություններում[54] անապահով տնային տնտեսությունները, կանայք և երիտասարդները նշվել են որպես թիրախային խմբեր մասնակցության ապահովման խթանման և աջակցության կառուցակարգեր կիրառելու առումով:
201. Հայաստանի Կլիմայի փոփոխության 4-րդ ազգային զեկույցի համաձայն (2020թ.)՝ 1929 թվականից մինչև 2016 թվականն ընկած ժամանակահատվածում դիտվել է տարեկան ջերմաստիճանի բարձրացում միջինը23°C-ով: Ընդհանուր տաքացման վտանգը և դրա աստիճանական ազդեցությունը Հայաստանի Հանրապետության բնակլիմայական պայմանների վրա կարող է հանգեցնել երաշտի ռիսկերի, ջրհեղեղների և սողանքների վտանգների, ընդհանուր վարելահողերի և հիմնական մշակաբույսերի բերքատվության կրճատման, էկոհամակարգի կազմի փոփոխության, չոր և անջրդի հողերի ընդլայնման, ջրի հասանելիության և սննդի արտադրության նվազման[55]:
202. Գյուղատնտեսության ոլորտը կլիմայի փոփոխության նկատմամբ ամենախոցելիներից մեկն է, ինչն անհրաժեշտ է դիտարկել որպես առանցքային ոլորտ ինչպես կլիմայի փոփոխությանը հարմարվելու, այնպես էլ ազդեցության մեղման համար[56]: Փորձագետների գնահատմամբ կանխատեսվում է, մասնավորապես՝ մինչև 2030 թվականը.

- ոռոգվող հողերի արտադրողականության կրճատում մոտ 24%-ով,
- արոտավայրերի ընդհանուր տարածքի և դրանց

արտադրողականության կրճատում 4-10%-ով,
- խոտի բերքատվության նվազում 7-10%ով, ինչն էլ իր հերթին կհանգեցնի անասնակերի արտադրության ծավալների նվազմանը,
- գյուղատնտեսական նշանակության հողերի վատթարացում (դեգրադացում), բնական արոտավայրերի վատթարացման ուժգնացում,
- անկայուն եղանակ, զուգորդված ուժգին փոթորիկների, սաստիկ քամիների և հորդառատ անձրևների հետ, ինչը վնաս կհասցնի մշակաբույսերին, բերքատվությանը՝ նվազեցնելով բերքատվությունը 8-14%-ով։[57]

203. Գյուղատնտեսական ոլորտում արտադրողականության նվազումը բացասաբար  է անդրադառնում խոցելի խմբերի պարենային ապահովության վրա, բնական աղետները և եղանակային պայմանները ստեղծում են ավելի բարդ աշխատանքային պայմաններ և լրացուցիչ ծանրաբեռնվածություն, այն դեպքում երբ գյուղատնտեսական աշխատանքների մի զգալի մաս կատարվում է կանանց կողմից՝ առանց արդիականացված միջոցների և տեխնոլոգիաների,  կլիմայի փոփոխության հարմարվողականության համար անհրաժեշտ ռեսուրսների սակավության պայմաններում՝ առավել խոցելի դառնալով դրա բացասական հետևանքներին։
204. Գյուղատնտեսության ոլորտի 2020-2030 թվականների տնտեսական զարգացման ծրագրում նշվում է գյուղաբնակ կանանց ու երիտասարդների գործարար ակտիվության բարձրացման նպատակային ծրագրերի իրականացման, թվային և այլ նոր տեխնոլոգիաների ներդրման հարցում կանանց աջակցության, գյուղատնտեսական նորամուծությունների համակարգում կանանց և երիտասարդության ներգրավվածությունը խթանող նախաձեռնությունների և լուծումների, այդ թվում՝ նորարարական էլեկտրոնային ուսումնառության հարթակների մշակման և այլ գենդեր-արձագանքող միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը։[58]
205. Ըստ Համաշխարհային բանկի 2017 թվականի տվյալների՝ անվտանգ խմելու ջուրը հասանելի է Հայաստանի Հանրապետության բնակչության 86%-ին։ Խմելու ջրի որակի, հասանելիության և սանիտարահիգիենիկ պայմանների վատթարացման հարցերն անմիջականորեն ազդում են առավել խոցելի խմբերի  կանանց, երեխաների, տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց վրա։ Ջրային ռեսուրսների սահմանափակման ռիսկերն ազդում են բնակչության բոլոր շերտերի վրա, բայց, հատկապես, աղքատ և խոցելի տնային տնտեսությունների և կանանց վրա. վերջիններս առավել մեծ պատասխանատվություն են կրում տնային տնտեսությունների առօրեական խնդիրների լուծման հարցերում։ Կանայք կազմում են աղքատ բնակչության 56%ը, նաև կանանց կողմից կառավարվող տնային տնեսություններում աղքատությունը կազմում է2% համեմատած տղամարդկանց կողմից կառավարվող տնային տնտեսությունների հետ 24.4%[59]։
206. Հաշվի առնելով ջրային ռեսուրսների սահմանափակման ռիսկերն ու դրանց գենդերային ու սոցիալական բացասական ազդեցությունները «Ջրային ռեսուրսների ոլորտում կլիմայի փոփոխության

հարմարվողականության 2022-2026 թվականների ծրագրում»[60] նախատեսվել են կրթական և գենդերային առաջնահերթ միջոցառումներ անբարենպաստ վիճակում գտնվող բնակավայրերի բնակչության, այդ թվում՝ խոցելի և հեռավոր բնակավայրերի կանանց, տնային տնտեսությունը միայնակ վարող մայրերի, կանանց գլխավորությամբ տնային տնտեսությունների անդամների կարողությունների զարգացման, ինչպես նաև ջրային ոլորտի կառավարման գործընթացներում կանանց ներգրավման ուղղությամբ:

207. Կլիմայի փոփոխության ազդեցությամբ պայմանավորված խնդիրներն առաջ են բերում, ինչպես բնապահպանական նորանոր լուծումների կիրառում, այնպես էլ էներգախնայող միջոցների օգտագործման, այլընտրանքային էներգետիկ լուծումների մշակման և կիրառման հանրայնացման առաջնահերթություն: Ընդհանուր առմամբ էներգետիկ անվտանգության և էներգետիկ համակարգերում կանանց մասնակցությունը բավականին ցածր է ամբողջ աշխարհում: Էներգիայի միջազգային գործակալության տվյալների համաձայն՝ կանայք ունեն միայն 22% մասնակցություն: Հայաստանում Հանրապետությունում աղջիկների համեմատականորեն ցածր ներկայացվածությունը գիտության, տեխնոլոգիայի, ճարտարագիտության, ինժեներության և մաթեմատիկայի բնագավառներում սահմանափակում է հետագայում նրանց մասնակցությունը և ստեղծագործական գործունեությունն էներգիայի և ենթակառուցվածքների հարմարավողականության ապահովման նորարարական աշխատաշուկաներում:

208. Մյուս կողմից կանայք առավել պատրաստակամ են կիրառելու էներգաարդյունավետ և հարմարվողական լուծումներ տնային տնտեսություններում՝ իրենց ընտանիքի անվտանգության և բարեկեցության բարելավման նպատակով:

209. Կլիմայի փոփոխությունն ազդում է նաև առողջության սոցիալական և բնապահպանական որոշիչ գործոնների վրա՝ մաքուր օդ, անվտանգ խմելու ջուր, բավարար և էկոլոգիապես մաքուր սնունդ, որոնք հանրային առողջության պահպանման կարևոր նախադրյալներից են:

210. Կլիմայի փոփոխության և շրջակա միջավայրի ազդեցության գնահատումը մարդկանց առողջության վրա կարևորվել է առողջապահության համակարգի 2023-2026 թվականների զարգացման ռազմավարության «Ապահով շրջակա միջավայր» բաժնում[61]: Մասնավորապես, առողջության վրա ազդող կլիմայի փոփոխության գործոնների իմացությունը, դրանց մեղմանն ու հարմարվողականության միջոցառումների մասին կանանց և սոցիալական խոցելի խմբերի տեղեկացվածության և իրազեկվածության բարձրացումը հանրային առողջապահության պաշտպանության կարևոր բաղադրիչներից են:

211. Կլիմայի փոփոխության և շրջակա միջավայրի աղտոտման հետևանքով մարդու առողջության վրա վնասակար ազդեցության մասին տեղեկացված լինելը կանանց և տղամարդկանց առողջության պահպանման կարևոր գործոն է, հատկապես վերարտադրողական առողջության և հանրային առողջության պաշտպանության բնագավառներում: Ուստի ռազմավարությունում հատկապես շեշտադրվել են անվտանգ միջավայրի վերաբերյալ ուսուցման և իրազեկման միջոցառումները:

212. **Նպատակներ՝**

- Կլիմայի փոփոխության գենդերային ազդեցության վերաբերյալ ուսումնասիրությունների, տվյալների հավաքագրման շրջանակի ընդլայնում և դրանց հանրայնացման, փոխկապված ոլորտներում ուսումնասիրությունների արդյունքների հասանելիության և կիրառելիության ընդլայնում:
- Էկոլոգիական խնդիրներում և կլիմայի ազդեցության մեղմանն ուղղված միջոցառումներում կանանց և տղամարդկանց համաչափ իրազեկվածության և մասնակցության բարձրացում, կլիմայի փոփոխությանն արձագանքող լուծումների վերաբերյալ որոշումների մշակման և կայացման հարցերում ներգրավվածության մակարդակի բարձրացում:
- Գյուղատնտեսության ոլորտում կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագրերում, այդ թվում՝ ապահովագրության ոլորտում, կանանց մասնակցության բարձրացում:
- Էներգախնայողության և այլընտրանքային էներգիայի ոլորտներում կանանց մասնագիտացման և ստեղծարար աշխատանքի ներգրավվածության մակարդակի բարձրացում:
- Հանրային առողջության վրա կլիմայի փոփոխության գենդերային առանձնահատկությունների վերաբերյալ հանրության իրազեկվածության բարձրացում:
- Էկոլոգիական գիտելիքների տիրապետող և դրանց համապատասխան վարքագիծ դրսևորող կանանց տեսակարար կշռի ավելացում:

213. **Ակնկալվող արդյունքներ՝**

  - Կլիմայի փոփոխության հետևանքով առաջացող խնդիրների գենդերային ազդեցության տվյալների հավաքագրման գործընթացը համակարգված և բարելավված է, ստացված տվյալները կիրառվում են ոլորտային հանրային քաղաքականություններում, ծրագրերում և միջոցառումներում:
  - Կլիմայի փոփոխության բացասական ազդեցության մեղմանը և հարմարվողականության բարձրացմանն ուղղված աշխատանքներում, էկոլոգիական խնդիրների լուծման գործընթացներում կանանց իրազեկվածությունը, մասնակցությունը և դերակատարությունը բարձր է:
  - Կլիմայի փոփոխության բացասական ազդեցության մեղման և հարմարվողականության բարձրացման հարցերում, էկոլոգիական խնդիրների լուծման գործընթացներում (այդ թվում՝ էկոլոգիական կրթության միջոցով) որոշում կայացնող կանանց տեսակարար կշիռն էականորեն բարձր է:
  - Գյուղատնտեսության արդիականացման ծրագրերում, այդ թվում՝ գյուղատնտեսական ապահովագրություն ունեցող տնտեսություններ վարող կանանց տեսակարար կշիռն ավելացել է:
  - Վերականգնվող էներգիայի ոլորտում կանանց

մասնագիտացումը թիրախավորված է և ներուժի օգտագործումն ընդլայնված է:
  - Հանրային առողջության վրա կլիմայի փոփոխության բացասական ազդեցության և գենդերային առանձնահատկությունների մասին իրազեկումն ապահովված է և էկոլոգիական գիտելիքների մակարդակն էականորեն բարելավված է:

214. **Հիմնական ցուցանիշներ՝**

- Կլիմայի փոփոխության հետևանքով առաջացող խնդիրների գենդերային ազդեցության ազգային ցուցանիշների համակարգի առկայություն, այդ թվում՝ տվյալների վարչական ռեգիստրներում կուտակվող գենդեր-տարանջատված ցուցանիշների թիվ:
- Գյուղատնտեսության ոլորտում կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագրերում, այդ թվում՝ գյուղատնտեսական ապահովագրություն ունեցող կանանց թիվ:
- Կլիմայի փոփոխության, այդ թվում՝ գենդերային և սոցիալական ազդեցության վերաբերյալ  կարողությունների զարգացման և վերապատրաստման ծրագրերի թիվ քաղաքացիական ծառայողների և համայնքային ծառայողների վերապատրաստման համակարգում:
- Էներգախնայողության և այլընտրանքային էներգիայի ոլորտներում ներգրավված կանանց տեսակարար կշիռ:
- Հանրային առողջության վրա կլիմայի փոփոխության ազդեցության և գենդերային առանձահատկությունների մասին  էկոլոգիական գիտելիք ունեցող բնակչության տեսակարար կշիռ:

## 4. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ, ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

215. Ռազմավարության և դրանից բխող Միջոցառումների ծրագրով նախատեսված միջոցառումները/ գործողություններն իրականացվում են համապատասխան պատասխանատու և համակատարող մարմինների փոխլրացված, համաձայնեցված գործունեության միջոցով:
216. Գործընթացի նկատմամբ առավել թափանցիկություն ապահովելու նպատակով Ռազմավարությունը և Միջոցառումների ծրագիրը տեղադրվում են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պաշտոնական կայքէջում:
217. Պատասխանատուն այն մարմինն է, որը նշված ժամկետում ապահովում է տվյալ գործողության ամբողջական կատարումը և վերջնական հաշվետվության ներկայացումը:
218. Համակատարողն այն մարմինն է, որն իր իրավասությունների սահմաններում ողջամիտ ժամկետում աջակցում է պատասխանատու մարմնին գործողության կատարման հարցում:
219. Գործողությունների ծրագրով սահմանված յուրաքանչյուր միջոցառման համար պատասխանատու պետական մարմինը սահմանված կարգով

յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո՝ 10 աշխատանքային օրվա ժամկետում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն է ներկայացնում հաշվետվություն՝ հաշվետվողականության պահպանման, տվյալների հավաքագրման և հետագա աշխատաքների համակարգման համար:

220. Յուրաքանչյուր տարվա ավարտից հետո՝ 15 աշխատանքային օրվա ժամկետում, պատասխանատու մարմինները ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն են ներկայացնում գործողությունների իրականացման տարեկան հաշվետվություններ, որոնք մեկամսյա ժամկետում ամփոփվում են նախարարության կողմից և հրապարակվում նախարարության պաշտոնական կայքէջում՝ տարեկան ամփոփ հաշվետվության տեսքով:
221. Ռազմավարության և միջոցառումների ծրագրի ընթացքի մշտադիտարկման գործառույթը համակարգում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը՝ ոլորտային պատասխանատու ստորաբաժանման միջոցով:
222. Միջոցառումների ծրագրի ժամկետի վերջին տարվա մինչև դեկտեմբերի 30-ը պատասխանատու բոլոր մարմինները ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն են ներկայացնում միջոցառումների իրականացման վերջնական հաշվետվություններ, որոնք մեկամսյա ժամկետում ամփոփվում են նախարարության կողմից, քննարկվում Խորհրդում և հրապարակվում նախարարության պաշտոնական կայքէջում՝ վերջնական հաշվետվության տեսքով: Վերջնական հաշվետվության նախագիծը ներկայացվում է անկախ փորձագիտական գնահատման, որի արդյունքները հրապարակվում են հաշվետվության հետ միասին:
223. Հասարակական և միջազգային կազմակերպությունները, Հայաստանում հավատագրված օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցչությունները, ինչպես նաև այլ անձինք կարող են գործողությունների ծրագրի կատարման վերաբերյալ ներկայացնել դիտարկումներ և զեկույցներ: Դիտարկումների և զեկույցի արդյունքները ներկայացվում են համապատասխան պատասխանատու մարմնին կամ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը: Դիտարկումները և զեկույցները հաշվի են առնվում գործողությունների կատարումը գնահատելիս և կարող են հիմք հանդիսանալ նոր գործողությունների/ միջոցառումների սահմանման և հայեցակարգերի մշակման համար:
224. Ռազմավարության ներդրման ընթացքում առաջնահերթ ուշադրություն կդարձվի շարունակական մշտադիտարկմանը: Մշտադիտարկում իրականացնելու համար հարկավոր է մշակել կառուցակարգեր, որոնք թույլ կտան տարբեր գերատեսչություններին միանման և արդյունավետ իրակականացնել մշտադիտարկումն ու գնահատումը:
225. Ռազմավարության միջոցառումների ծրագրով նախատեսվում է ներդնել գենդերային քաղաքականության ծրագրերի մշտադիտարկման և տեղեկատվության փոխանակման մեխանիզմ, որը կնպաստի ռազմավարության նախատեսված միջոցառումների իրականացման արդյունավետության գնահատմանը, ծագած խնդիրների հստակեցմանը և հնարավոր լուծումանը:
226. Ռազմավարության գնահատում կիրականացվի նաև մոնիտորինգի և գնահատման այլընտրանքային ձևերի՝ պաշտոնական վիճակագրական

գենդերային ազգային ցուցանիշների հիման վրա մշակված մոնիթորինգային ցուցանիշների և դրանց վերլուծության, քաղաքացիական հասարակության կողմից իրականացվող հետազոտությունների, զեկույցների միջոցով:

## 5. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ

227. Գործողությունների ծրագրի իրականացման ընթացքում հնարավոր են որոշակի գործողությունների ժամկետների երկարաձգումներ՝ պայմանավորված երկրում տիրող սոցիալ-տնտեսական, հնարավոր համաճարակային, տարածաշրջանային և աշխարհաքաղաքական բարդ զարգացումներով և այլ խնդիրների հաղթահարման հանգամանքով:
228. Գործողությունների ծրագրի իրականացման ընթացքում հնարավոր են որոշակի խնդիրներ համակարգային նորամուծությունների հետ կապված: Նոր համակարգերի, կառուցակարգերի ներդնումը հաճախ բախվում է որոշակի տարընթերցման, դիմադրության և թյուրընկալման: Այս առումով հարկավոր են լրացուցիչ աշխատանքներ իրականացնել, այդ թվում՝ իրազեկման և կարողության զորեղացման ծրագրեր՝ ռիսկը նվազագույնի հասցնելու միտումով:
229. Գործողությունների ծրագրի իրականացման արդյունավետության նախապայման է միջգերատեսչական սերտ համագործակցությունը և ռազմավարական հաղորդակցությունը պետական տարբեր կառույցների միջև, ինչպես նաև համագործակցությունը միջազգային կառույցների, մասնավոր և հասարակական սեկտորների միջև: Արդյունավետ համագործակցություն ապահովելու համար անհրաժեշտ է ինստիտուցիոնալ գործուն մեխանիզմի վերահսկողությունը ծրագրի իրականացման ընթացքում:

## 6.ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

230. Ռազմավարության Գործողությունների ծրագրի իրականացման ֆինանսական միջոցները սահմանված են և ներկայացված են Ռազմավարության Միջոցառումների ծրագրի համապատասխան բաժնում:
231. Ռազմավարության Միջոցառումների ծրագրի իրականացման ֆինանսական միջոցները ներառում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեն և օրենքով չարգելված այլ աղբյուրներ:

[1] Տե'ս “Gender Impact Assessment of Economic Empowerment of Women in Armenia: Lessons Learned from the Implementation of the 2019-2023 Strategy for Implementation of Gender Policy in the Republic of Armenia and the Way Forward”, CIVITTA, UN Women, 2023.

[2] Տե'ս https://www3.weforum.org/docs/WEF_GGGR_2020.pdf:

[3] ՀՀ Վիճակագրական ծառայության տվյալներ, 2022:

[4] Տե'ս նաեւ CEDAW/C/SR.1913 եւ CEDAW/C/SR.1915, կետ 29:

[5] Տե'ս հղում N3:

[6] Տե'ս https://womennet.am/women-in-power-stereotypes/:

[7] Տե'ս https://oxygen.org.am/wp-content/uploads/2021/03/Women-PP_Arm.pdf:

[8] Տե'ս https://hdr.undp.org/content/2023-gender-social-norms-index-gsni#/indicies/GSNI:

[9] Տե’ս https://womennet.am/women-in-power-stereotypes/:

[10] Տե'ս հղում N7:

[11] Տե'ս հղում N 7:

[12] Տե'ս https://www.iri.org/wp-content/uploads/2021/01/womens_political_participation_breavis_iri_results_presentation_final_07.01.2021.pdf:

[13] «Պետական քաղաքականության դերը ԶԼՄ-ներում կանանց ոչ կարծրատիպային կերպարի ձեւավորման հարցում» // «Կանայք քաղաքականության, հանրային կառավարման եւ քաղաքացիական հասարակության մեջ» ծրագրի շրջանակներում ՔՀԿ - ԱԺ համագործակցության հարթակի հանդիպում, Օքսֆեմ հիմնադրամ, ՄԱԿԶԾ, 2023 թ**.:** «Ուղեցույց գենդերային հավասարության եւ կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ Հայաստանի լրագրողների եւ լրատվամիջոցների համար», հեղ.՝ Ի.Բալաբանովա, Ա. Կոջոյան, Եվրոպայի խորհուրդ, 2020: Տե'ս նաեւ CEDAW/C/SR.1913 եւ CEDAW/C/SR.1915, կետ 23 ա եւ բ, 24 բ:

[14] Տե'ս նաեւ CEDAW/C/SR.1913 եւ CEDAW/C/SR.1915, կետ 29, 30 ա եւ բ:

[15] Տե'ս https://armstat.am/am/?nid=81&id=2530:

[16] Տե’ս նաեւ՝ Տե'ս նաեւ CEDAW/C/SR.1913 եւ CEDAW/C/SR.1915, կետ 35 դ:

[17] Տե'ս https://documents1.worldbank.org/curated/en/619011497437361947/pdf/106933-ARMENIAN-PUBLIC-Synthesis-Final-Arm-June4-EDIT-M-final-06-12-17.pdf:

[18] Տե'ս https://documents1.worldbank.org/curated/en/619011497437361947/pdf/106933-ARMENIAN-PUBLIC-Synthesis-Final-Arm-June4-EDIT-M-final-06-12-17.pdf։

[19] Տե՛ս նաեւ՝ Տե'ս նաեւ CEDAW/C/SR.1913 եւ CEDAW/C/SR.1915, կետ  39 բ։

[20] Տե՛ս նաեւ՝ Տե'ս նաեւ CEDAW/C/SR.1913 եւ CEDAW/C/SR.1915, կետ  36 ա։

[21] Տվյալները՝ http://www.ysu.am/files/Nvard%20Melkonyan%20and%20Yuliana%20Melkumyan-arm.pdf։ Տե՛ս նաեւ՝ Տե'ս նաեւ CEDAW/C/SR.1913 եւ CEDAW/C/SR.1915, կետ  36 ա։

[22] Տե՛ս նաեւ՝ Տե'ս նաեւ CEDAW/C/SR.1913 եւ CEDAW/C/SR.1915, կետ  36 գ։

[23] Անգլերեն՝ employability

[24] Տե'ս՝ https://armstat.am/file/article/gender_2021.pdf։

[25] Տե'ս նաեւ՝ Տե'ս նաեւ CEDAW/C/SR.1913 եւ CEDAW/C/SR.1915, կետ 33։

[26] Տե՛ս նաեւ՝ Տե'ս նաեւ CEDAW/C/SR.1913 եւ CEDAW/C/SR.1915, կետ  33 ա, 34 բ։

[27] Տե'ս նաեւ CEDAW/C/SR.1913 եւ CEDAW/C/SR.1915։

[28] Տե'ս՝ CEDAW/C/SR.1913 եւ CEDAW/C/SR.1915

[29] Տե՛ս նաեւ՝ Տե'ս նաեւ CEDAW/C/SR.1913 եւ CEDAW/C/SR.1915, կետ  33 ա, 34 բ։

[30] Տե՛ս նաեւ՝ Տե'ս նաեւ CEDAW/C/SR.1913 եւ CEDAW/C/SR.1915, կետ  33 գ, 34 ե։

[31] Մանրամասներն ու վերլուծությունը տե'ս՝ Kojoyan, A., Aghakhanyan, I. (2020). “Gender in Education Settings: Case Study of English Primary School Textbooks in Armenia” // Armenian Folia Anglistika, Vol. 16, Issue 2 (22), 2020.  https://journals.ysu.am/index.php/arm-fol-angl/article/view/Vol.16_No.2_2020_pp.058-073/Vol.16_No.2_2020_pp.058-073.pdf

[32] Մանրամասները տե'ս՝ https://armstat.am/file/article/gender_2021.pdf։ , https://armstat.am/file/article/gender_2022_n.pdf։

[33] Տե'ս նաեւ՝ Տե՛ս նաեւ՝ Տե'ս նաեւ CEDAW/C/SR.1913 եւ CEDAW/C/SR.1915, կետ  33 գ, 34 ե։

[34] Տե'ս CEDAW/C/SR.1913 եւ CEDAW/C/SR.1915, կետ  37։

[35] Տե՛ս https://moh.am/images/legal-806.pdf?fbclid=IwAR0wuhHEDynZafU_T_HIA_vny0EYo1YMT7RKk0HcEVN3520qzsQ6dCcrYco

[36] Տե'ս CEDAW/C/SR.1913 եւ CEDAW/C/SR.1915, կետ 38, 43:

[37] Տե'ս CEDAW/C/SR.1913 եւ CEDAW/C/SR.1915, կետ 37:

[38] Մանրամասները՝ https://eecaplatform.org/wp-content/uploads/2021/12/study_armenia_arm_final.pdf

[39] «Կանանց նկատմամբ բռնության եւ ընտանեկան բռնության կանխարգելման եւ դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայով սահմանված չափանիշների տեսանկյունից ՀՀ քրեական օրենսդրության վերլուծություն (Խ. Տրուչերո, Լ. Սարգսյան), Երեւան, Եվրոպայի խորհուրդ, «Հայաստանում կանանց նկատմամբ բռնության եվ ընտանեկան բռնության կանխարգելումը եւ դրա դեմ պայքարը. «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության եւ ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի եւ ոստիկանության հարակից իրավական ակտերի վերլուծությունը եւ առաջարկությունները (Լ. Ման) Երեւան, Եվրոպայի խորհուրդ, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2019 թվականի զեկույցը, Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար Դունյա Միյատովիչի զեկուցը 2018 թվականի սեպտեմբերի 16-ից 20-ը Հայաստան կատարած այցելությունից հետո: Ստրասբուրգ, Եվրոպայի խորհուրդ եւ այլ փաստաթղթեր:

[40] Այլոց թվում. Պեկինյան հռչակագիր եւ գործողությունների ծրագիր, 1995թ., Վիեննայի հռչակագիր եւ գործողությունների ծրագիր, 1993թ., Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի ընդհանուր ժողովի հռչակագիր (DEDAW), 1967թ., Կանանց նկատմամբ բռնության վերացման ՄԱԿ-ի ընդհանուր ժողովի հռչակագիր (DEVAW, 1993թ., Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրութուն, Կանանց, խաղաղության ու անվտանգության մասին ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի որոշում N1325 (2000թ.), ՄԱԿ-ի հազարամյակի զարգացման նպատակներ, 2000թ. (ՀԶՆ-3՝ գենդերային հավասարության խթանում եւ կանանց լիազորությունների ընդլայնում)/Կայուն զարգացման օրակարգ 2030, ընդունված ՄԱԿ-ի բոլոր անդամ երկրների կողմից 2015թ-ին (ԿԶՆ-5-ը վերաբերում է գենդերային հավասարության ապահովմանն ու կանանց եւ աղջիկների նկատմամբ բռնության վերացմանը), ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի որոշում 1820, 2008թ., ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի որոշում 1889, 2009թ. Եվրոպայի խորհրդի, նախարարների կոմիտեի (2002թ.) 5-րդ հանձնարարական անդամ երկրներին, բռնությունից կանանց պաշտպանության մասին, 2002թ., Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի որոշում 1582 (2002թ.) ընտանեկան բռնության մասին, Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի որոշում 1654 (2009թ.) կնասպանության մասին, Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի որոշում 1681 (2004թ.), Եվրոպայում ընտանեկան բռնության դեմ պայքարի ծրագիր, Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի որոշում 1691 (2009թ.) կանանց բռնաբարության, ներառյալ ամուսինների միջեւ սեռական բռնության մասին, Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի հանձնարարական 1905 (2010թ.) ընտանեկան բռնության վկա դարձած երեխաների մասին, Եվրոպայում անվտանգության եւ համագործակցության կազմակերպություն, նախարարների խորհրդի որոշում No. 14՝ հակամարտությունների

կանխարգելման, ճգնաժամային իրավիճակների կառավարման եւ հետպատերազմյան վերականգնման գործընթացներում կանանց դերի մասին, 2005թ., Եվրոպայում անվտանգության եւ համագործակցության կազմակերպություն, նախարարների խորհրդի որոշում No. 15՝ կանանց նկատմամբ բռնության կանխարգելման եւ վերացման մասին, եւ մի շարք այլ փաստաթղթեր:

[41] Դրանք են. 1. Կանանց դեմ բռնության կանխարգելման, դատապրտման եւ վերացման միջամերիկյան կոնվենցիան (Բելեմ դու Պարայի կոնվենցիա), ստորագրվել է Ամերիկյան նահանգների կազմակերպության (OAS) կողմից Բրազիլիայի Բելեմ դու Պարա քաղաքում՝ 1994թ-ին եւ ուժի մեջ մտել 1995թ-ին, Մարդու եւ ժողովրդների իրավունքների աֆրիկյան խարտիայի արձանագրություն Աֆրիկայում կանանց իրավունքների մասին (Մապուտոյի արձանագրությունը), ստորագրված է Աֆրիկյան միության ժողովի կողմից, Մոզամբիկի Մապուտո քաղաքում՝ 2003թ-ին եւ ուժի մեջ է մտել 2005թ-ին, Կանանց նկատմամբ բռնության եւ ընտանեկան բռնության կանխարգելման եւ վերացման մասին ԵԽ կոնվենցիան, ստորագրվել է ԵԽ նապարարների կոմիտեի կողմից 2011թ-ին եւ ուժի մեջ մտել 2014թ-ին:

[42] ԿՆԽՎԿ կոմիտե, ընդհանուր հանձնարարական 35, 2017թ.

[43] ԿԶՆ իրականացում, կամավոր ազգային դիտարկում, Հայաստան. հաշվետվությունը ներկայացվել է ՄԱԿ-ի կայուն զարգացման բարձրաստիճան քաղաքական փորումին, 9-18 հուլիսի 2018թ., Երեւան

[44] Համընդհանուր պարբերական դիտարկման աշխատանքային խմբի հաշվետվություն, Հայաստան: Հավելված (Հունիսի 5, 2015թ.), U.N. Doc. A/HRC/29/11/Add.1, 120.24, 120.25, 120.26.

[45] Համընդհանուր պարբերական դիտարկման աշխատանքային խմբի հաշվետվություն, Հայաստան: Հավելված (Հունիսի 5, 2015թ.), U.N. Doc. A/HRC/29/11/Add.1, 120.100, 120.105, 120.106, 120.107, 120.108, 120.109, 120.111, 120.112, 120.113.

[46] Համընդհանուր պարբերական դիտարկման աշխատանքային խմբի հաշվետվություն, Հայաստան: Հավելված (Հունիսի 5, 2015թ.), U.N. Doc. A/HRC/29/11/Add.1, 120.113

[47] ՄԻՊ 2019թ. տարեկան հաղորդում https://www.ombuds.am/images/files/15b2661f76d10eb07746d7d4d4dec84f.pdf, էջ 603:

[48] Տե՛ս ԿՆԽՎ Կոմիտեի 35-րդ Ընդհանուր հանձնարարական, պարբերություն 34 (b)):

[49] «Երաշխավորել, որ գենդերային հիմքով կանանց նկատմամբ բռնության մասին տվյալների հավաքագրման եւ պահպանման գործընթացը համապատասխանի գործող միջազգային չափանիշներին եւ երաշխիքներին, այդ թվում՝ տվյալների պաշտպանության օրենսդրությանը: Տվյալների եւ վիճակագրության հավաքագրումը եւ օգտագործումը պետք է

համապատասխանեն մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության ընդունված միջազգային նորմերին եւ էթիկական սկզբունքներին» (պարբերություն 34(d)):

[50] Տե՛ս, օրինակ, ԳՐԵՎԻՕ-ի գնահատման զեկույցն Իտալիայի մասին (2020թ.). «Նման չափանիշներն հիմնվում են հետեւյալ սկզբունքների վրա. չթույլատրված մուտքն անձնական տվյալներին հնարավոր չէ, մասնակից բոլոր մարմինները հետեւում են հստակ սահմանված կարգերի, որոնցով կանոնակարգվում են տվյալների փոխանակման ընթացակարգերը, ապահովվում է այն անձանց լիարժեք անանությունը, ում անձնական տվյալները գրանցվել են, այդ թվում` պահանջ, որ այդ տվյալները չեն տրամադրվում առանց նրանց գիտակցված համաձայնության, ինչպես նաեւ անհատներին հնարավոր չէ նույնականացնել հանրությանը հասանելի տվյալների միջոցով»: Պորտուգալիայի մասին զեկույցում (2019թ.) ԳՐԵՎԻՕ-ն ընդգծել է, որ հարկ է մշտապես երաշխավորել տուժողի անձնական տվյալների գաղտնիության պաշտպանությունը, ինչը նշանակում է, որ այդ տվյալները կարող են տրամադրվել երրորդ կողմին տուժողի գիտակցված համաձայնությամբ` բացառությամբ կյանքին սպառնացող իրավիճակների:

[51]  ՄիՊ 2019 տարեկան հաղորդում, էջեր 611-618:

[52] Տե'ս https://unfccc.int/process-and-meetings/the-paris-agreement/the-paris-agreement (Նախաբան): Տե՛ս նաեւ` Տե'ս նաեւ CEDAW/C/SR.1913 եւ CEDAW/C/SR.1915, կետ  51:

[53] Տե'ս https://unfccc.int/process-and-meetings/the-paris-agreement/the-paris-agreement (Հոդված 7, կետ 5; Հոդված 11, կետ 2):

[54] «ՀՀ գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարություն» (N 1886-L որոշում, 19 դեկտեմբեր 2019թ., Նախաբան, կետ 6; Գլուխ 1. կետ 14; Գլուխ 3. կետ 32); «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագիր (մինչեւ 2040 թվականը)» (N 48-L որոշում, 14 հունվար 2021թ., Գլուխ 1. Տեսլական; Ամփոփում); «Էներգախնայողության եւ վերականգնվող էներգետիկայի 2022-2030 թվականների ծրագիր» (N 398-L որոշում, 24 մարտ 2022թ., Գլուխ 3, բաժին 3.3.1); «Ջրային ռեսուրսների ոլորտում կլիմայի փոփոխության հարմարվողականության 2022-2026 թվականների ծրագիր» (N 1692-L որոշում, 3 նոյեմբեր 2022թ., Գլուխ 2 եւ Գլուխ 5); «Հայաստանի Հանրապետության առողջապահության համակարգի 2023-2026թթ. զարգացման ռազմավարությունը» (N 174-L որոշում, 9 փետրվարի 2023թ., Գլուխ 2) եւ այլն:

[55] Տե'ս https://eu4climate.eu/armenia/:

[56] Տե'ս  https://unfccc.int/sites/default/files/armenia_agriculture.pdf:

[57] Հայաստանում կլիմայի փոփոխության նկատմամբ գյուղատնտեսական ոլորտի խոցելիության եւ կլիմայի փոփոխության հարմարվողականության գնահատում, իրավական եվ ինստիտուցիոնալ դաշտ, 2020:

[58] Տե'ս https://www.e-gov.am/gov-decrees/item/33178/։

[59] Տե'ս https://www.adb.org/sites/default/files/institutional-document/546716/armenia-country-gender-assessment-2019.pdf։

[60] Տե'ս https://www.e-gov.am/gov-decrees/item/39264/։

[61] Տե'ս https://www.e-gov.am/gov-decrees/item/39848/։

Հավելված N 2
ՀՀ կառավարության
2024 թվականի N -Լ որոշման

**ԾՐԱԳԻՐ**

Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2024-2028 թվականների միջոցառումների

| NN ը/կ | Միջոցառումներ | Ակնկալվող արդյունք | Ժամկետ | Արդյունքա ցուցանիշն |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| | **Գերակայություն 1.** Կառավարման բոլոր ոլորտներում եւ որոշումների ընդունման ս առաջխաղացման ազգային մեխանիզմի կատարելագործում, կանանց եւ տղամար ապահովում եւ ընդլայնում | | | |
| 1) | Կանանց առաջխաղացման ազգային մեխանիզմների վերանայմանն ուղղված հետազոտության իրականացման հիման վրա՝[1] առաջարկությունների ներկայացում, ոլորտային | Կանանց առաջխաղացման վերաբերյալ փաստահեն տվյալների առկայություն։ | 2024թ. 4-րդ եռամսյակ | Ոլորտայի իրավակա թիվ, որոնց առաջարկ փոփոխու լրացումնե |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | նորմատիվ իրավական ակտերում փոփոխությունների եւ լրացումների իրականացում (օրենսդրական բարեփոխումներ): | | | |
| 2) | **«Կանանց եւ տղամարդկանց հավասար իրավունքների եւ հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների եւ լրացումների իրականացում, ինչպես նաեւ ոլորտը կարգավորող օրենսդրության բարելավում:**[2] | Լավարկված օրենսդրական դաշտ՝ հիմք ընդունելով հետազոտության արդյունքները: | 2025թ. 4-րդ եռամսյակում | **«Կանանց տղամարդ հավասար իրավունք հավասար հնարավոր ապահովմ մասին» ՀՀ փոփոխութ լրացումնե առկայությ** |
| 3) | Կանանց հարցերով խորհրդի եւ դրան կից աշխատանքային խմբի համապատասխան իրավական | Կանանց հարցերով խորհրդի եւ դրան կից աշխատանքային | 2024-2028թթ. | Կանանց հ խորհրդի ե աշխատան |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ակտով սահմանված նիստերի, հանդիպումների անցկացում:[3] | խմբի կանոնավոր եւ շարունակական գործունեության ապահովում: | . պարբերաբար | հանդիպու առնվազն` չորս հանդ |
| 4) | Հիմք ընդունելով մարզային գենդերային խնդիրները` մարզպետներին եւ Երեւանի քաղաքապետին կից գենդերային հարցերով հանձնաժողովների տարեկան պլանների կազմում եւ նիստերի կանոնավոր եւ շարունակական գործունեության անցկացում: | Մարզպետներին եւ Երեւանի քաղաքապետին կից գենդերային հարցերով հանձնաժողովների արդյունավետ գործունեության ապահովում: | 2024-2028թթ. պարբերաբար | Տարեկան գենդերազ պլանների առկայությ հաշվետվո ամփոփու ներկայաց հարցերով |
| 5) | Գործադիր մարմնում որոշումների կայացման մակարդակում կանանց ներգրավվածության ավելացմանն ուղղված ուսումնասիրության անցկացում Եւհամապատասխան օրենքներում և ենթաօրենսդրական ակտերում փոփոխությունների | Համապատասխան իրավական ակտերում քվոտավորման սահմանում, քվոտավորման արդյունքում | 2025թ. 4-րդ եռամսյակում | Լրամշակվ իրավակա նախագծե առկայությ իրավակա քվոտավոր սահմանմ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | կատարում:[4] | գործադիր մարմնում որոշումների կայացման մակարդակում կանանց ներգրավվածության ավելացում, տոկոսային հարաբերակցության փոփոխություն: | | առկայությ համապա իրավակա նախագծե |
